# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎՈՒՄ

(Մարտ 11-13, 2014 թ.)

Վեհափա՛ռ Տեր, Գերաշնո՛րհ Սրբազան Հայրեր, եւ մեծարգո՛ Տիարք,

Սույնով ներկայացվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2013 թ. գործունեությունը, որում անդրադարձ է կատարված անցյալ տարի Հայրապետական ընդունելություններին ու այցելություններին, ներեկեղեցական եւ միջեկեղեցական ասպարեզներում իրագործված ծրագրերին, Մայր Աթոռի միաբանության, Եկեղեցու քարոզչական, կրթադաստիարակչական եւ սոցիալական առաքելությանը:

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցյալ տարվա ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են այցելել եկեղեցական ու պետական բարձրաստիճան պատվիրակություններ, ազգային, հասարակական եւ մշակութային գործիչներ եւ բազմաթիվ ուխտավորներ: Ստորեւ ներկայացված են առավել կարեւորները.

***ա. Ընդունելություններ***

2013 թ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն ունեցել է շուրջ 70 պաշտոնական հանդիպում եկեղեցական ու պետական բարձրաստիճան պաշտոնյաների ու պատվիրակությունների հետ: Դրանցից կարելի է առանձնացնել հետեւյալները.

1. Հունվարի 17-ին Վեհափառ Հայրապետն ընդունել է Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլիի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի:

2. Հունվարի 24-ին՝ ԱՊՀ երկրների Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի:

3. Մարտի 6-ին՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի նախագահ Նորբերթ Լամմերթի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Հերմինե Նաղդալյանի:

4. Ապրիլի 18-ին՝ Հայաստանում ուխտավորաբար գտնվող Վրաստանի Լափին Եկեղեցու առաջնորդ Ջուզեպպե արքեպիսկոպոս Պազոտտոյին, հոգևոր սպասավորներին ու միանձնուհիներին՝ ուղեկցությամբ Հայաստանում, Վրաստանում, Ռուսաստանում և Արևելյան Եվրոպայում Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ Տ. Ռաֆայել արքեպիսկոպոս Մինասյանի:

5. Ապրիլի 19-ին՝ Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի և իսլամական առաջնորդման նախարար Սեյեդ Մոհամմադ Հոսեյնիի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի:

6. Ապրիլի 23-ին՝ Անդրկովկասում պապական նվիրակ Նորին Սրբազնություն Մարեկ արքեպիսկոպոս Սոլչինսկուն:

7. Մայիսի 15-ին՝ Համայն Ռուսիո Պատրիարքության Մոսկվայի թեմի պատրիարքական տեղապահ, Նովոսպասյան հայրապետական վանքի վանահայր, Վոսկրեսենսկի եպիսկոպոս Սավվային և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Բոսեի էկումենիկ դպրոցի տնօրեն Հայր Իոան Սաուկային (Ռումին Ուղղափառ Եկեղեցի):

8. Մայիսի 30-ին՝ Ուելսի արքայազն Չարլզին:

9. Հունիսի 10-ին՝ աշխարհահռչակ օպերային երգչուհի Մոնսերատ Կաբալյեին՝ ուղեկցությամբ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի:

10. Հունիսի 21-ին՝ իսպանացի նշանավոր գրող Գոնսալես Գուարչին՝ ուղեկցությամբ Հայաստանի գրողների միության նախագահ Լևոն Անանյանի:

11. Հուլիսի 10-ին՝ ՀՀ-ում Լիտվայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասին:

12. Հուլիսի 27-ին՝ Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարար Մաքսիմ Սոկոլովի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարար Գագիկ Բեգլարյանի:

13. Հուլիսի 30-ին՝ ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Իվան Վոլինկինին:

14. Օգոստոսի 24-ին՝ Անգլիկան Եկեղեցու պատվիրակությանը՝ գլխավորությամբ Ջիբրալթարի անգլիկան եպիսկոպոս Ջեոֆրի Ռոուելի և ուղեկցությամբ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ, Արթիկի թեմի առաջնորդ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի:

15. Սեպտեմբերի 4-ին՝ ՀՀ-ում Լիբանանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ժան Մաքարոնին:

16. Հոկտեմբերի 20-ին՝ Հաղարծնի վանական համալիրի բացման առիթով

Հայաստան ժամանած Շարժայի կառավարիչ Շեյխ Սուլթան բին Մոհամմադ ալ Քասիմիի ներկայացուցիչ Համիդ Դիյա Ջաֆարի գլխավորած պատվիրակությանը:

17. Նոյեմբերի 21-ին՝ Հայաստանի Հանրապետությունում Իտալիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Բրունո Սկապինիին:

18. Դեկտեմբերի 9-ին՝ Հայաստանի Հանրապետությունում Ռումինիայի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Սորին Վասիլեին:

***բ. Այցելություններ***

Մարտի 8-ին Նորին Սրբությունը Հայրապետական այցով մեկնել է Մեծ Բրիտանիայի Հայոց թեմ՝ թեմական-եկեղեցական հարցերով:

Մայիսի 7-ին՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Հայոց Արեւելյան թեմ՝ հրավերով թեմակալ առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի եւ թեմական խորհրդի՝ հանդիպումներ ունենալու թեմական-վարչական կառույցների ներկայացուցիչների եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերարների հետ:

Հունիսի 23-ին՝ Ֆրանսիա եւ Շվեյցարիա՝ թեմական-եկեղեցական հարցերով:

Սեպտեմբերի 16-ին՝ Մոսկվա՝ նախագահելու Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի նորակառույց առաջնորդանիստ եկեղեցու օծման եւ առաջնորդանիստ եկեղեցական համալիրի բացման արարողությունները:

Հոկտեմբերի 12-ին՝ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմ՝ հանդիսապետելու Եկատերինբուրգի Ս. Կարապետ նորակառույց եկեղեցու օծման արարողությունը:

Հոկտեմբերի 28-ին մեկնել է Հարավային Կորեայի Բուսան քաղաք՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 10-րդ համագումարին մասնակցելու նպատակով, որի շրջանակներում Վեհափառ Հայրապետը, ի թիվս բազմաթիվ հանդիպումների, հանդիպել է նաեւ Հունգարիայի Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչ Գուստավ եպիսկոպոս Բոլկեի եւ Հունգարական եկեղեցիների խորհրդի գլխավոր քարտուղար դոկտոր Վիլմոս Ֆիսչեյի հետ:

Ժողովի ընթացքում պատվիրակների միաձայն քվեարկությամբ ԵՀԽ համանախագահ է ընտրվել Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ առաջիկա 8 տարվա համար: Նորին Սրբությունն այցելել է նաեւ Չինաստան, մասնավորապես՝ Պեկին, Շանհայ, Քուանզու, Հոնկոնգ քաղաքներ՝ ծանոթանալու հայ համայնքային կյանքին:

Նոյեմբերի 16-ին՝ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմ՝ առաջնորդանիստ Ս. Պայծառակերպություն եկեղեցում հանդիսապետելու եկեղեցու բարերարներին շքանշաններ հանձնելու հանդիսավոր արարողությունը:

Դեկտեմբերի 12-ին՝ Ֆրանսիայի Հայոց թեմ՝ մասնակցելու աշխարհահռչակ օպերային երգչուհի Մոնսերատ Կաբալյեի մեծարման երեկույթին:

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

***Կաթողիկոսական գրասենյակ***

Հրապարակվել են Հայրապետական 127 Կոնդակներ, որոնցից 37-ը՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ», 7-ը՝ «Սուրբ Սահակ-Մեսրոպ» և 79-ը՝ «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու և 4-ը՝ արքության պատվի արժանացնելու վերաբերյալ:

Անցյալ տարի Հայրապետական պարգևագրերով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու բարերարներ Տիգրան Իգմիրլյանը և Նազար Նազարյանը արժանացել են «Ասպետ Սուրբ Էջմիածնի» պարգևին:

Շնորհվել են նաև Հայրապետական 163 օրհնության գրեր տարբեր անհատների, ազգային ու հասարակական հաստատությունների:

## ԴԻՎԱՆԱՏՈՒՆ

***Թղթակցություն***

Մայր Աթոռի Դիվանատունն ապահովել է ստացած գրություններին ու նամակներին պատասխան գրություններ առաքելու, շնորհավորական, հրավեր գրություններ հղելու, Գերագույն հոգևոր խորհրդի նիստերի, Եպիսկոպոսաց ժողովի կազմակերպման ու դրանց օրակարգի հետ կապված նյութերի հավաքման, Մայր Աթոռում շքանշանների հանձնման և այլ միջոցառումների կազմակերպման աշխատանքները: Անցյալ տարվա ընթացքում Դիվանատունն ստացել է 4323 գրություն ու նամակ, պատրաստել և առաքել է 4390-ը: Կազմակերպել է 50 Վանական խորհրդի նիստ: Ընթացիկ արխիվում հիմնական աշխատանքներին զուգահեռ կատարվել է նաև Դիվանատան 2007 թվականի փաստաթղթերի հանձնում Մայր Աթոռի արխիվ:

## ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐ

Անցյալ տարի ևս շարունակվել են Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կողմից համատեղ գործող սրբադասման և ծիսական հանձնախմբերի աշխատանքները:

Հունվար 24-ին Երուսաղեմի Հայոց պատրիարք է ընտրվել Նուրհան արք. Մանուկյանը, ում գահակալության արարողությունը կատարվել է հունիսի 4-ին:

Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքության Մեսրոպ Պատրիարքի հիվանդության պայմաններում ընթացիկ գործունեությունը շարունակում է իրականացվել պատրիարքական ընդհանուր փոխանորդ Գերշ. Տ. Արամ արքեպ. Աթեշյանի գլխավորությամբ: Անցյալ տարի կյանքի 87-րդ տարում վախճանվեց Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության միաբան Գերշ. Տ. Շահան արքեպիսկոպոս Սվաճյանը:

Սեպտեմբեր 24-27-ը կազմակերպվել է Հայ Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովը՝ նվիրապետական աթոռների ներկայացուցիչների եւ ողջ եպիսկոպոսաց դասի մասնակցությամբ:

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ ԵՎ ՊԱՇՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ

### *ա. Եկեղեցականների թիվը*

Անցյալ տարի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցականների թիվը 676 է եղել, որոնցից 53-ը՝ եպիսկոպոս, 46-ը՝ վարդապետ եւ ծայրագույն վարդապետ, 50-ը՝ աբեղա, 421-ը՝ քահանա, 106-ը՝ սարկավագ, ովքեր ծառայում են Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու տարբեր կառույցներում:

Ցավով ենք անդրադառնում, որ անցյալ տարի ի Տեր հանգեավ մեր եկեղեցու վաստակաշատ եկեղեցական, Մայր Աթոռի երիցագույն միաբաններից Գերշ. Տ. Արսեն արքեպիսկոպոս Բերբերյանը: Վախճանվեց նաեւ Հոգշ. Տ. Սարգիս աբեղա Այվազյանը (Կոտայքի թեմ):

### *բ. Ձեռնադրություններ*

Անցյալ տարի մեր հոգեւորականաց շարքերը համալրվեցին նոր եկեղեցականներով, տեղի ունեցան քահանայից եւ սարկավագաց ձեռնադրություններ, վարդապետական աստիճանի տվչություններ: Արքության պատվի են արժանացել 4 եպիսկոպոս, վարդապետական աստիճան են ստացել 12 աբեղա, ձեռնադրվել են 3 կուսակրոն եւ 7 ամուսնացյալ քահանա, 40 սարկավագ:

Ապրիլի 21-ին Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում Գեւորգյան հոգեւոր ճեմարանն ավարտած 10 սարկավագներ կոչվեցին քահանայության եւ օծվեցին՝ ձեռամբ Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գերշ. Տեր Գեւորգ եպիսկոպոս Սարոյանի: Արման սրկ. Վարդանյանը վերակոչվեց Տ. Գաբրիել քահանա, Միեր սրկ. Մուրադյանը՝ Տ. Հրաչ քահանա, Գոռ սրկ. Հակոբյանը՝ Տ. Տիրայր աբեղա, Էդգար սրկ. Սեփանյանը՝ Տ. Հարություն քահանա, Արթուր սրկ. Անդրեասյանը՝ Տ. Վահանդ քահանա, Լեւոն սրկ. Երնջակյանը՝ Տ. Աղան աբեղա, Գոռ սրկ. Թարվերդյանը՝ Տ. Հեթում քահանա, Խաչատուր սրկ. Տյոմկինը՝ Տ. Ղեւոնդ քահանա, Գերասիմ սրկ. Հայրապետյանը՝ Տ. Օշին քահանա, Արմեն սրկ. Սահակյանը՝ Տ. Դերենիկ աբեղա:

Դեկտեմբերի 24-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնի օրը, հընթացս Ս. Պատարագի, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը կատարեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Ե. լսարանի 22 սաների, Քահանայից պատրաստման լսարանի 17 ուսանողների եւ Սյունյաց թեմի մեկ սպասավորի սարկավագական ձեռնադրություն:

***գ. Տվչություններ***

Մայիսի 14-ին արքության պատիվ է շնորհվել Կոտայքի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանին, սեպտեմբերի 10-ին՝ Վայոց ձորի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանին և Գերշ. Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանին, սեպտեմբերի 17-ին՝ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանին:

Անցյալ տարի վարդապետական իրենց թեզերը պաշտպանել և վարդապետական տվչության արարողությամբ մասնավոր վարդապետական չորս աստիճանների են արժանացել 12 աբեղաներ.

Տ. Սահակ աբեղա Ծաքարյանը (թեման՝ «Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի Հայոց թեմը»),

Տ. Արիստակես աբեղա Այվազյանը (թեման՝ «Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու երկերը հայ մատենագրության մեջ»),

Տ. Գաբրիել աբեղա Սարգսյանը (թեման՝ «Տերունական աղոթքի հայ միջնադարյան մեկնությունները»),

Տ. Տարոն աբեղա Ղուլիկյանը (թեման՝ «Ախթալայի և Քոբայրի վանքերը (Պատմաեկեղեցական և դավանական պատկանելության քննություն»),

Տ. Շահե աբեղա Անանյանը (թեման՝ «Իմաստություն և Աստվածաշունչ. Իմաստության կերպարն ըստ Առակաց Ա.-Թ.-ի»),

Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը (թեման՝ «Քրիստոնեական կրթության և արժեքների դերը Երրորդ Հանրապետության տարիներին»),

Տ. Զաքարիա աբեղա Բաղումյանը (թեման՝ «Անապակ բաժակի խնդիրը Հայոց Եկեղեցում»),

Տ. Միքայել աբեղա Գևորգյանը,

Տ. Բարկեն աբեղա Սալբիյանը (թեման՝ «Զաքարյանները և Հայոց Եկեղեցին»),

Տ. Նարեկ աբեղա Ավագյանը (թեման՝ «Թաղման ծեսը Զ.-ԺԸ. դարերում ըստ ձեռագիր և տպագիր «Մաշտոցների» և ժողովրդական սովորությունները»),

Տ. Տիրան աբեղա Պետրոսյանը (թեման՝ «Սուրբ Գրիգոր Տաթևացու՝ յոթ խորհուրդների աստվածաբանությունը»)

Տ. Մաղաքիա աբեղա Ամիրյանը (թեման՝ «Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռը և նրա տեղափոխությունները»):

***դ. Կարգալուծություններ***

Անցյալ տարի կարգալույծ են հռչակվել 4 եկեղեցական.

Փետրվարի 11-ին՝ Տ. Ոսկան քահանա Բաղումյանը (Տավուշի թեմ)՝ եկեղեցական ծառայությունից հրաժարվելու մասին իր դիմումի հիման վրա:

Մարտի 22-ին՝ Տ. Զոհրապ քահանա Մազմանյանը (Վիրահայոց թեմ)՝ հովվական իր ծառայության վայրը լքելու համար:

Նոյեմբերի 15-ին՝ Տ. Նշան աբեղա Պետրոսյանը (Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմ)՝ եկեղեցական ծառայությունից հրաժարվելու մասին իր դիմումի համաձայն:

Դեկտեմբերի 12-ին՝ Տ. Եղիա աբեղա Խաչատրյանը՝ ուխտազանցության եւ եկեղեցականին անհարիր ընթացքի համար:

### *ե. Նշանակումներ*

Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Կոտայքի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Առաքել արքեպիսկոպոս Քարամյանն առաջնորդական իր ծառայությանը համատեղ ստանձնել է ՀՀ ոստիկանության հոգեւոր պատասխանատուի պաշտոնը:

Տ. Հմայակ աբեղա Սահակյանը ծառայության է կոչվել Մայր Աթոռում:

Տ. Արիս աբեղա Տոնոյանը նշանակվել է Խոր վիրապի վանահայր:

Տ. Կիրակոս աբեղա Դավթյանը ծառայության է կոչվել Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմում, իսկ Տ. Սամվել աբեղա Մխիթարյանը՝ Տավուշի թեմում:

Տ. Պարթեւ աբեղա Բարսեղյանը, վերադառնալով Ֆրանսիայի Հայոց թեմում հոգեւոր ծառայությունից, նշանակվել է Մայր Աթոռի փոխդիվանապետ:

Տ. Սիփան աբեղա Գեւորգյանն ազատվել է Մայր Աթոռի Դիվանատան եկեղեցական-ժողովական կառույցների գրասենյակի տնօրենի պարտականություններից եւ հոգեւոր ծառայության կոչվել Չիլիի Հայոց համայնքում:

Տ. Մեսրոպ վարդապետ Պարսամյանը, ազատվելով Շվեյցարիայի Հայոց թեմի առաջնորդական տեղապահի պարտականություններից, ծառայության է կոչվել Ֆրանսիայի Հայոց թեմում:

Տ. Զավեն աբեղա Յազիչյանը հոգեւոր ծառայության է կոչվել Հնդկահայոց հոգեւոր հովվությունում՝ ստանձնելով Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարչի պաշտոնը:

Տ. Արսեն քահանա Սարոյանը, ազատվելով Բանակի առաջնորդությունում ստանձնած իր պարտականություններից, ծառայության է կոչվել Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանում:

Տ. Սեւակ քահանա Գաբրիելյանը, ազատվելով Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր սպասավորությունից, ծառայությունը շարունակում է ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմում:

Տ. Հրաչ քահանա Մուրադյանն հոգեւոր սպասավորության է կոչվել Բուլղարիայի Հայոց թեմում:

Տ. Օշին քահանա Հայրապետյանը՝ Արթիկի թեմում:

Տ. Հեթում քահանա Թարվերդյանը՝ Ռումինիայի Հայոց թեմում:

Տ. Հարություն քահանա Սեփանյանը՝ Արգենտինայի Հայոց թեմում:

Հուլիսի 10-ից Հայրապետական պնօրինությամբ Եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն է նշանակվել Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը:

Տ. Նարեկ վարդապետ Ավագյանը եւ Տ. Պետրոս աբեղա Ազարյանը հոգեւոր ծառայության են նշանակվել Իրաքի Հայոց թեմում:

Տ. Եղիշե վարդապետ Ավետիսյանը, ազատվելով Հայ Եկեղեցու երիտասարդաց միավորման հոգեւոր պատասխանատուի պարտականություններից, ծառայության է կոչվել Շվեդիայի հայոց համայնքում՝ Կենտրոնական Եվրոպայի եւ Շվեդիայի Հայրապետական պատվիրակության հայրապետական պատվիրակի պաշտոնակատարի իշխանության ներքո:

Տ. Արարատ քահանա Պողոսյանը նշանակվել է «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի տնօրեն:

Տ. Կարապետ վարդապետ Հարությունյանն ազատվել է Գուգարաց թեմում ստանձնած պարտականություններից եւ ծառայության վերադարձել Ֆրանսիայի Հայոց թեմ:

Անցյալ տարի Մայր Աթոռի բաժիններն իրենց ենթաբաժիններով ( ընդհանուր՝53), որոնցում ծառայում են 1336 անձինք՝144 եկեղեցական եւ 1192 աշխարհական, արդյունավոր կերպով կատարել են իրենց աշխատանքները՝ապահովելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կենսագործունեությունը:

Անցյալ տարվա ընթացքում կատարվել են նաեւ Մայր Աթոռի կառույցների աշխարհիկ անդամների փոփոխություններ եւ նոր նշանակումներ:

Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ է նշանակվել Տիար Արա Վարդանյանը, ճարտարապետական հարցերով Վեհափառ Հայրապետի խորհրդական՝ տիար Արտավազդ Նազարեթյանը: Տիար Սահակ Վարդանյանը, ազատվելով Վարչատնտեսական բաժնի փոխտնօրենի պարտականություններից, նշանակվել է Գործառնական բաժնի տնօրեն:

## ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցյալ տարի եւս հայրենի կառավարության հետ հարաբերություններն ընթացել են համագործակցության ոգով:

Տարեկան երկու անգամ՝ Սուրբ Ծննդյան եւ Սուրբ Հարության տոների առիթով ՀՀ Նախագահի գլխավորությամբ պետական ողջ ավագանին Մայր Աթոռում մասնակցել է Հայրապետական Պատարագներին:

Մայր Աթոռը ներկայացուցիչներ ունի պետական տարբեր հանձնախմբերում՝ Եկեղեցու դիրքորոշումը ներկայացնելու տարբեր հարցերի շուրջ: Անցյալ տարվա ընթացքում Մայր Աթոռը շարունակել է համագործակցությունը Մշակույթի, Կրթության եւ Գիտության, Սփյուռքի նախարարությունների եւ ՀՀ կառավարության այլ գերատեսչությունների հետ:

Նոյեմբերի 18-ին Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի է ունեցել «Եկեղեցի եւ պետություն փոխհարաբերություններ. հրամայականներ եւ մարտահրավերներ» թեմայով միջազգային գիտաժողովը:

ՀՀ կառավարության որոշումով 2013թ. գույքահարկից եւ հողի հարկից Մայր Աթոռին պատկանող 466 գույքային միավորից ազատվել է 306-ը: Ներկայումս աշխատանքներ են տարվում գույքահարկից եւ հողի հարկից չազատված 160 գույքային միավորների հարցը կարգավորելու ուղղությամբ:

Հետանկախության շրջանում տարբեր անհատների եւ բարերարների կողմից կառուցված եկեղեցիներից ու մատուռներից 92-ը չի ձեւակերպվել Մայր Աթոռի անունով եւ ներկայումս ունի ինքնակամ կառույցի կարգավիճակ: 2013թ. Մայր Աթոռի դիվանատանը հավաքվել է թեմերի կողմից ներկայացված այդ եկեղեցիների ցանկերը եւ սկսվել է եկեղեցիները Մայր Աթոռի անունով ձեւակերպելու գործընթացը: Այս պահին Մայր Աթոռում կա ինքնակամ շինության կարգավիճակ ունեցող թվով հինգ եկեղեցիների վկայական: Մյուս եկեղեցիների ձեւակերպման գործընթացը շարունակվում է:

2013թ. դեկտեմբերին ՀՀ կառավարություն է ներկայացվել պատմական հուշարձանի կարգավիճակ ունեցող այն սրբավայրերի ցանկը (370 միավոր), որոնք առաջիկայում պետք է սեփականության իրավունքով վերադարձվեն Մայր Աթոռին:

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցյալ տարի կանոնավոր գումարվեցին Քահանայից, Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովներ, թեմակալ առաջնորդների եւ Մայր Աթոռի պաշտոնավարող եպիսկոպոսների հավաքներ, ինչպես նաեւ վեցդարյա ընդմիջումից հետո՝ Եպիսկոպոսաց ժողով:

***ա. Քահանայից ժողով***

Փետրվարի 5-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, թեմակալ առաջնորդների, Մայր Աթոռի միաբանության եւ հայաստանյան թեմերի քահանա հայրերի մասնակցությամբ, տեղի է ունեցել Ս. Ղեւոնդյանց քահանայից տոնի առիթով գումարվող քահանայից ավանդական ամենամյա հավաքը: Քահանայից ժողովին մասնակցում էին Հայաստանի ու Սփյուռքի 220 հոգեւոր սպասավոր՝ օրակարգի նյութ ունենալով՝ «Թեմերում ծխական կյանքի եւ եկեղեցական կառույցների (ծխական խորհուրդ, տիկնանց միություն, երիտասարդաց միություն եւ այլն) կազմակերպումը եւ նրանց գործունեության կանոնակարգումը» թեման:

Հավաքից հետո Վեհափառ Հայրապետի կողմից որոշ քահանաներ արժանացել են լանջախաչի եւ ծաղկյա փիլոնի:

### *բ. Եպիսկոպոսաց ժողով*

Սեպտեմբեր 24-27-ին 6-ամյա ընդմիջումից հետո, ինչպես արդեն նշեցինք, տեղի ունեցավ Եպիսկոպոսաց ժողով՝ օրհնությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի, մասնակցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության 62 արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների:

Ժողովի բացման արարողությանը ներկա էր Հայաստանի Հանրապետության Նախագահ Տիար Սերժ Սարգսյանը:

Նիստերին եպիսկոպոսաց դասը քննարկեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցում սրբադասման ավանդության վերականգնման հարցը և այդ շրջագծում Հայոց ցեղասպանության զոհերի սրբադասման խնդիրը, Ս. Մկրտության և Դրոշմի առնչությամբ Ծիսական հանձնախմբի կողմից կատարված աշխատանքները և անդրադարձ կատարեց Հայ Եկեղեցու այժմեական մարտահրավերներին:

Ժողովի ընթացքում որդեգրվեց Հայոց ցեղասպանության նահատակների հավաքական սրբադասման սկզբունքը: Այս առնչությամբ Սրբադասման հանձնախմբին հանձնարարվեց շարունակել նահատակների անհատական և խմբային սրբադասման կարգի ուսումնասիրությունը, մշակել սրբադասման կանոնակարգն ու ծիսակարգը, ինչպես նաև որոշել սրբոց նահատակաց հիշատակության թվականը՝ հաջորդ Եպիսկոպոսաց ժողովին ներկայացնելու համար:

Եպիսկոպոսաց ժողովը արդյունքների ամփոփման հանգրվանին մտահոգությամբ անդրադարձավ նաև մեր ժողովրդի ազգային, եկեղեցական կյանքում առկա ընկերային, տնտեսական, ժողովրդագրական և պարաբնույթ այլ մարտահրավերներին ու դժվարություններին: Նշյալ մարտահրավերներին ու հիմնախնդիրներին ընդառաջ՝ եպիսկոպոսաց դասը, ելնելով Հայ Առաքելական Եկեղեցու ծառայական ոգուց, օրհնությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի, որոշեց հաստատել հիմնադրամ՝ Հայաստանի ու Արցախի և սփյուռքի կարիքավոր զավակներին աջակցություն ցուցաբերելու համար: Հիմնադրամի գործունեության մեկնարկի համար հատկացվել է 2.000.000 ԱՄՆ դոլարի նախնական դրամագլուխ, իսկ հիմնադրամի ընթացիկ աշխատանքների կազմակերպման համար ստեղծվել է հատուկ հանձնախումբ:

### *գ. Գ-Հխ ժողովներ*

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում անցյալ տարի գումարվել են նաև Գերագույն հոգևոր խորհրդի երկու ընդլայնված (փետրվար 19-21, հուլիս 30-31) և երեք տեղական (ապրիլ 16, մայիս 15, օգոստոս 29) ժողովներ:

### *դ. Թեմակալ առաջնորդների հավաք*

Անցյալ տարի Մայր Աթոռում գումարվել է նաև Հայաստանյան թեմակալ

առաջնորդների եւ Մայր Աթոռի պաշտոնավարող եպիսկոպոսների հավաք (օգոստոս 27):

Վերոհիշյալ ժողովներում քննության են առնվել նվիրապետական աթոռներին եւ թեմական կյանքին, Եկեղեցու հոգեւոր-կրթական, քարոզչական առաքելությանը, կանոնադրական ու ծիսական հարցերին վերաբերող մի շարք խնդիրներ, այլեւ Եպիսկոպոսաց ժողովի կազմակերպման հետ առնչված հարցեր, Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված Հայ Եկեղեցու կողմից իրականացվելիք միջոցառումների առաջարկներ, սիրահայությանը աջակցելու ծրագրեր:

## ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Անցյալ տարի մեր Սուրբ Եկեղեցու առաքելությունը բարի արգասավորում ունեցավ նաեւ հոգեւոր-մշակութային մարզում:

Մայիսի 14-ին Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվել է Արովյանի Ս. Հովհաննես եկեղեցու օծումը :

Սեպտեմբերի 16-ին Վեհափառ Հայրապետը նախագահել է Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի նորակառույց Ս. Պայծառակերպություն առաջնորդանիստ եկեղեցու օծման եւ առաջնորդանիստ եկեղեցական համալիրի բացման արարողությունները:

Հոկտեմբերի 12-ին Վեհափառ Հայրապետի ձեռամբ օծվել է Եկատերինբուրգի նորակառույց Ս. Կարապետ եկեղեցին:

Հոկտեմբերի 19-ին Տավուշի թեմում, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, տեղի է ունեցել Հաղարծնի վանական համալիրի բացման արարողությունը: Վանքը հիմնանորոգվել է Արաբական Միացյալ Էմիրությունների Գերագույն խորհրդի անդամ, Շարժայի կառավարիչ Նորին Գերազանցություն շեյխ դոկտոր Սուլթան Բին Մոհամմադ ալ Քասիմիի բարերարությամբ:

Մայիսի 18-ին Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններն առաջին անգամ մասնակցել են «Թանգարանների գիշեր» համաեվրոպական միջոցառմանը: Հատուկ այդ միջոցառման շրջանակներում Մայր Տաճարի ավանդատուն-թանգարանում առաջին անգամ կազմակերպվել է Հայրապետական որոշ նվիրական խորհրդանշանների, Ամենայն Հայոց Հայրապետներին տրված եկեղեցական ու պետական պարգեւների, ինչպես նաեւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատվո բարձր շքանշանների ցուցահանդես:

Հունիսի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի շենքում, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ տեղի է ունեցել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու շքանշանների հանձնման արարողություն: Իրենց ազգօգուտ եւ եկեղեցանվեր գործունեության

համար Հայ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանի են արժանացել ՀՀ կրոնի գործերի պետական խորհրդի նախկին նախագահ փիար Լազար Սուջյանը և աշխատակցուհի փիկին Լաուրա Հարությունյանը:

Հուլիսի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, տեղի է ունեցել «Ոսկե ծիրան» միջազգային ամենամյա կինոփառատոնի առիթով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սահմանած «Եղիցի լույս» մրցանակի հանձնման արարողությունը: Հայոց Եկեղեցու հաստատած այս մրցանակն անցած տարի շնորհվել է մեծանուն կինոռեժիսոր Արտավազդ Փելեշյանին:

Օգոստոսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են այցելել շուրջ 200 երիտասարդներ՝ շնորհավորելու Վեհափառ Հայրապետին ծննդյան տարեդարձի առիթով և իրենց հավատարմությունը, նվիրվածությունն ու զորակցությունը հայտնելու Հայ Եկեղեցուն: Երիտասարդները ներկայացնում էին «Հայ Եկեղեցու երիտասարդաց միավորումը», «Մայր Աթոռի քարոզչական կենտրոն» խումբը, «Եկեղեցասեր երիտասարդներ» կառույցը, բուհական երիտասարդական միությունները, Մայր Աթոռի «Մանանա» երիտասարդական-քրիստոնեական ծրագիրը, ինչպես նաև «Սփյուռքահայ ուսանողների խորհուրդը», «Ռուսաստանի հայերի միության» և «Համաշխարհային հայկական կոնգրեսի» երիտասարդաց կազմակերպությունները, «Սերունդ», «Երիտասարդություն», «Երիտասարդներ հանուն ապագայի» հասարակական կազմակերպությունները:

Սեպտեմբերի 2-ին Ժնևի էկումենիկ կենտրոնում բացվել է «Զի Ես կենդանի եմ, և դուք կենդանի լինելոց էք» (Յովհ. ԺԴ. 19) խորագրով ցուցահանդես՝ նվիրված Ի. դարի առաջին ցեղասպանությանը՝ Հայոց Մեծ եղեռնին: Ցուցահանդեսը կազմակերպել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվը և Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամը՝ աջակցությամբ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի:

Սեպտեմբերի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ալեք և Մարի Մանուկյան գանձատանը, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, տեղի է ունեցել «Կառլ և Էմմա Սողոյաններ» ձեռագիր մատյանների ցուցասրահի բացման արարողությունը:

Հայ Եկեղեցու բարերարներ տեր և տիկին Սողոյանները Սուրբ Էջմիածնին են ընծայաբերել երկու տասնյակ ձեռագիր մատյաններ և հայերեն առաջին տպագիր Աստվածաշունչը (Ամստերդամ, 1666 թ.):

Նոյեմբերի 15-ին Երևանում տեղի է ունեցել «Իզմիրլյան» բժշկական հաստատության և «Սուրբ Ներսես Մեծ» գիտաբժշկական կենտրոնի վերաբացման արարողությունը՝ հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի և ներկայությամբ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ու շվեյցարահայ ազգային բարերարներ տեր և տիկին Տիգրան և Հելենա Իզմիրլյանների:

Հոկտեմբերի 18-ին, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում իր աշխատանքն է սկսել «Եկեղեցի եւ պետություն փոխհարաբերություններ. հրամայականներ եւ մարտահրավերներ» թեմայով միջազգային գիտաժողովը:

Հոկտեմբերի 20-ին շուրջ 7.000 երիտասարդների մասնակցությամբ տեղի է ունեցել Սիրո, հավատքի եւ հավատարմության ուխտերթ՝ կազմակերպված Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու երիտասարդաց միավորման, մի շարք երիտասարդական կառույցների եւ հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ: Ուխտերթը կոչված էր վերահաստատելու հայ երիտասարդության հավատարմությունը ազգային-հոգեւոր արժեքների, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ու հայ ժողովրդի կյանքում նրա անխաթար առաքելության հանդեպ:

Նոյեմբերի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ, տեղի է ունեցել «Լավագույն ուսուցիչ» ամենամյա հանրապետական մրցույթի 2013 թվականի հաղթողների մրցանակաբաշխության հանդիսությունը:

## ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչն է Գերշ. Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը:

Անցյալ տարի բնականոն կերպով շարունակվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հարաբերությունները Քույր եկեղեցիների հետ: Այս ընթացքում Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի կողմից կազմակերպվել են մի շարք միջոցառումներ:

1. Գերշ. Եզնիկ արքեպ. Պետրոսյանը եւ Հոգշ. Շահե վրդ. Անանյանը հունվար 22-27-ը մասնակցել են Վատիկանում տեղի ունեցած Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու եւ Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների միջեւ պաշտոնական աստվածաբանական երկխոսության միջազգային հանձնախմբի 10-րդ հանդիպմանը:

2. Գերշ. Տ. Հովակիմ եպս. Մանուկյանը եւ Հոգշ. Տ. Ռուբեն արդ. Զարգարյանը ապրիլի 15-16-ին Ավստրիայի Զալցբուրգ քաղաքում մասնակցել են «Վանական կյանքը Հայ Եկեղեցում» խորագրով սիմպոզիումին:

3. Գերշ. Գրիգորիս արք. Բունիաթյանը ապրիլի 23-24-ը մասնակցել է Կիեւում կայացած «Կրոնի եւ քաղաքականության փոխհարաբերությունները 21-րդ դարում» թեմայով միջկրոնական փորումին:

4. Հոգշ. Շահե վրդ. Անանյանը մասնակցել է մայիսի 29-30-ը Թբիլիսիում տեղի ունեցած «Կրոնի եւ հավատքի ազատություն» թեմայով կոնֆերանսին:

5 Գերշ. Տ. Եզնիկ արքեպ. Պետրոսյանը, Գերշ. Տ. Հովակիմ եպս. Մանուկյա-

նը, Հոգշ. Տ. Մեսրոպ վրդ. Պարսամյանը, Հոգշ. Տ. Թովմա արդ. Խաչատրյանը հուլիսի 3-8-ը մասնակցել են Բուդապեշտում կայացած Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի 14-րդ համագումարին:

6. Գերշ. Տ. Եզնիկ արքեպ. Պետրոսյանը հունիսի 26-ից հուլիսի 1-ը մասնակցել է Աթենքում տեղի ունեցած Միջխորհրդարանական ուղղափառության վեհաժողովի գերագույն ասամբլեային՝ «Խորհրդարանական ժողովրդավարություն-քրիստոնեություն- ուղղափառություն՝ արժեքներ եւ նշանակություններ» խորագրով:

7. Հուլիսի 3-8-ը Բուդապեշտում տեղի է ունեցել Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի 14-րդ համագումարը, որի ընթացքում քննարկվել է ԵԵԿ-ի վերակազմավորման նպատակով ստեղծված «Ուփսալայի» փաստաթուղթը, կատարվել են փոփոխություններ կոնֆերանսի սահմանադրության եւ կանոնադրությունների մեջ, ընտրվել է կառույցի ղեկավար մարմինը (ղեկավար մարմնում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ ընտրվել է Գերշ. Տ. Եզնիկ արքեպ. Պետրոսյանը) եւ առաջիկա տարիների համար որոշվել է կոնֆերանսի գործունեության գերակա ուղղությունը:

8.Հոգշ. Տ. Տիրան վրդ. Պետրոսյանը սեպտեմբերի 2-6-ը մասնակցել է Ալբանիայի Դյուրեշ քաղաքի Ս. Վլաշ վանքում տեղի ունեցող «Լոզան. Ուղղափառ նախաձեռնության» կողմից կազմակերպված հերթական խորհրդաժողովին:

9. Հոգշ. Տ. Զաքարիա վարդապետ Բաղումյանը սեպտեմբերի 3-7-ը մասնակցել է Իտալիայի Բոզե վանական համալիրում տեղի ունեցած «Հոգեւոր կյանքի շրջափուլեր» խորագրով 21-րդ էկումենիկ միջազգային կոնֆերանսին:

10. Գերշ. Տ. Արմաշ եպս. Նալբանդյանը սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 1-ը Հռոմում մասնակցել է խաղաղությանը նվիրված միջազգային կոնֆերանսին:

11. Հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 8-ը Հարավային Կորեայի Բուսան քաղաքում տեղի է ունեցել ԵՀԽ-ի 10-րդ համագումարը, որին մասնակցել են 150 երկրների շուրջ 360 եկեղեցու ներկայացուցիչներ, եկեղեցու պետեր, բարձրաստիճան պաշտոնյաներ, հասարակական գործիչներ: Համագումարին մասնակցել է Ամենայն Հայոց Կաթողիկոսության պատվիրակությունը՝ Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ:

2013 թ. նոյեմբերի 14-ից, տնօրինությամբ Վեհափառ Հայրապետի, Միջեկեղեցական աստվածաբանական խորհուրդը վերակազմավորվել եւ դարձել է չորս հոգուց բաղկացած խումբ, որոնք մշտապես պետք է կապի մեջ լինեն էկումենիկ կառույցների հետ եւ ներկայացնեն Հայ Եկեղեցին:

## ՀՈԳԵՎՈՐ-ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***ա. Գեւորգյան հոգեւոր ճեմարան***

Մայր Աթոռի հոգեւոր կրթական հաստատությունների վերատեսուչը եւ ԳՀՃ տեսուչն է Գերշ. Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը:

Գեւորգյան հոգեւոր ճեմարանում դասավանդել են 65 դասախոս, որոնցից 39-ը աշխարհական, իսկ 26-ը՝ հոգեւորական:

Անցյալ տարի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի դասախոսական կազմը համալրվել է մի շարք նոր դասախոսներով: Հաստատվել է նոր ուսումնական ծրագիր, խմբագրվել եւ ճշտվել են առարկաների ծրագրերն ու դասավանդվող նյութերը, աշխատանքներ են տարվել նոր ուսումնական ծրագրերի ներդրման ուղղությամբ: Բակալավրիատի ավարտական պետական քննությունների ցանկի մեջ ավելացվել են 2 նոր առարկա՝ Գրաբար եւ Աստվածաշնչագիտություն:

Աշխատանքներ են տարվել Գեւորգյան հոգեւոր ճեմարանում ասպիրանտուրա բացելու համար: Ճեմարանում ինֆորմատիկայի պարապմունքներն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով համակարգչային սենյակը համալրվել է 30 նոր համակարգիչով: Նվիրատվությունը կատարվել է տեր եւ տիկին Ջոն եւ Գայանե Փիրիլյանների ազնիվ բարերարությամբ (Լոս Անջելես, Կալիֆոռնիա):

Իրենց ուսումն ավարտել են Քահանայից պատրաստման Գ. (ավարտական) լսարանի 10 սան, որոնք 2013 թ. դեկտեմբերի 24-ին ձեռնադրվել են սարկավագ: Սաներից 2-ը կուսակրոն քահանայության դիմում են տվել, իսկ 6-ը՝ ամուսնացյալ:

Նոյեմբերի 1-ին բացվել է Քահանայից պատրաստման նոր Ա. լսարան, որում ուսանում են 7 սան: Ներկայումս Քահանայից պատրաստման լսարանում ուսանում է 33 սան:

Դեկտեմբերի 24-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ԳՀՃ Ե. լսարանի 22 սան, Քահանայից պատրաստման լսարանի 17 ուսանող եւ Սյունյաց թեմից մեկ սպասավոր ստացել են սարկավագական ձեռնադրություն:

2013 թ. հունիսի 27-ին Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Զ. լսարանի 29 սան հաջողությամբ հանձնել է մագիստրատուրայի ավարտական պետական քննությունները եւ ավարտել ուսումը: Անցյալ տարի կազմակերպվել է նաեւ 36 շրջանավարտի ավարտաճառերի պաշտպանություն:

2013-2014 ուստարում 17 հոգի ընդունվել է Ա. լսարան: Ներկայումս ճեմարանում ուսանում են 108 սան:

***բ. Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոց***

Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի տեսուչն է Հոգշ. Տ. Հարություն աբեղա Կիրակոսյանը: Դպրանոցում դասավանդում են 33 դասախոս, որոնցից 11-ը հոգեւորական, իսկ 22-ը՝ աշխարհական: Ներկայումս դպրեվանքում ուսանում է 72 սան: 2013-2014 ուս. տարում դպրանոցի ուսումնական կազմը համալրվել է նոր դասախոսներով:

Պետական քննությունները հաջողությամբ հանձնելով՝ Դ. լսարանի 10 սան տեղափոխվել է ԳՀԾ-ի Ե. լսարան:

Դասերին զուգահեռ կազմակերպվել են տարբեր դասախոսություններ, ուխտագնացություններ, միջոցառումներ և հանդիպումներ երիտասարդական միությունների, ուսանողների, հոգևոր, հասարակական և մշակութային գործիչների հետ:

Սուրբ Ստեփաննոսի տոնին Վազգենյան դպրանոցի Բ. և Դ. լսարանի սաները, ձեռամբ Գերշ. Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանի, ստացել են դպրի և ուրարակրի աստիճաններ:

### *գ. Հառիճավանքի Թ-րբանճյան ընծայարան*

Հառիճավանքի ընծայարանի տեսուչն է Հոգշ. Տ. Նշան աբեղա Հմայակյանը: 2013 թ. փետրվարի 1-ից Հառիճի վանական համալիրը փոխանցվել է Արթիկի թեմին: Ընծայարանում դասավանդում են 16 դասախոս, իսկ սաների թիվը 39-ն է: Ապրիլին ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից Հառիճավանքի ընծայարանին տրամադրվել է ավագ դպրոցի կրթական ծրագրեր իրականացնելու արտոնագիր: Հունիսին ընծայարանի 10-րդ և 11-րդ դասարանների աշակերտները հաջողությամբ հանձնել են 2012-2013թթ. ուսումնական տարվա կիսամյակային քննությունները: Նույն ժամանակահատվածում ընծայարանում առաջին անգամ կազմակերպվել են պետական ավարտական քննություններ, որոնք հանձնել են 12-րդ դասարանի սաները: Նոյեմբերին Հառիճավանքի ընծայարանի գրադարանը համալրվել է ավագ դպրոցի հումանիտար հոսքի դասագրքերով:

### *դ. Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարան և Դավթյան օրիորդաց դպրոց*

Հայոց մարդասիրական ճեմարանում աշակերտենի և ուսանողների ընդհանուր թիվը կազմում է՝ 67 հոգի (17 աղջիկ և 50 տղա): Նրանցից 42-ը Հայաստանից են, 22-ը՝ Իրանից, 1-ը՝ Իրաքից, 2-ը՝ Հնդկաստանից: Ներկայումս սաներից 5-ը սովորում է ավագ դպրոցում, իսկ 13-ը՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում:

2013 թվականի ընթացքում ճեմարանում իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ, կազմակերպվել են ուխտագնացություններ, հիշարժան հանդիպումներ, իրականացվել են շինարարական-վերանորոգչական աշխատանքներ:

### *ե. Հայորդյաց տներ*

Հայորդյաց տների հոգևոր տեսուչն է Հոգշ. Տ. Կոմիտաս վարդապետ Հովնանյանը: Կառույցում ընդգրկված են Էջմիածնի, Աշտարակի, Վանաձորի, Երևանում՝ Նորքի, Մալաթիայի և Արաբկիրի հայորդյաց տները, Մանրանկարչության արվեստի կենտրոնը:

Հայորդյաց տներում, ուր հաճախել են գրեթե 3000 երեխա, կազմակերպվել

են բազմաբնույթ մեծ և փոքր միջոցառումներ, ցուցահանդեսներ, համույթների մենահամերգներ, հանդիսություններ, մրցույթներ, վիկտորինաներ: Իրականացվել են դասալսումներ, մեթոդաբանական քննարկումներ, կիսամյակային ստուգարքներ և պարեվերջյան քննություններ: ՀՏ-ների սաները հանդես են եկել բազմապիսի միջոցառումներով՝ նվիրված եկեղեցական և պետական տոներին, կազմակերպվել են մրցույթ -ցուցահանդեսներ:

Տարվա ընթացքում բոլոր հայորդյաց տներում իրականացվել է 176 միջոցառում:

## ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

### 1. Գործունեություն հանրակրթության ոլորտում

#### *1ա. Նախադպրոցական ոլորտ*

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և Կրթության ու գիտության նախարար տիար Արմեն Աշոտյանի 2013թ.-ի ապրիլի 17-ի թիվ 407-Ա/Ք հրամանով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնը, Կրթության և գիտության նախարարության հետ համագործակցելով, կազմակերպել և իրականացրել է նախադպրոցական ուսումնական հաստատությունների (ՆՈՒՀ) «Լավագույն տնօրեն» և «Լավագույն դաստիարակ» հանրապետական մրցույթը, որի արդյունքում ներկայացված 38 տնօրենից և 72 դաստիարակից գնահատվել և պարգևատրվել են լավագույնները՝ յուրաքանչյուր մարզից և Երևանից:

Լավագույն տնօրեն ճանաչված մանկավարժների ղեկավարած ՆՈՒՀ-երի շուրջ 600 սան հունիսի 1-ին Երեխաների պաշտպանության օրվա առթիվ հյուրընկալվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և ստացել Վեհափառ Հայրապետի օրհնությունը: Նշյալ ծրագիրն իրականացվել է մեկենասությամբ տիար Տիգրան Հովհաննիսյանի:

ՀՀ տարածաշրջանների մի շարք ՆՈՒՀ-երում ՔԴԿ տարածաշրջանային պատասխանատուների նախաձեռնությամբ տեղերում ձևավորվել են հոգևոր անկյուններ: ՔԴԿ աշխատակիցները երբեմն ՔԴԿ-ում ծառայող հոգևորականների կամ համայնքի հոգևոր հայրերի հետ մասնակցել են մանկապարտեզներում կազմակերպվող տարաբնույթ միջոցառումներին:

Սիրիահայ ընտանիքների մանկապարտեզ հաճախող շուրջ 103 երեխայի համար Տիկնիկային գործիչների միության դերասանների մասնակցությամբ կազմակերպվել է տոնական հանդիսություն:

#### *1բ. Միջնակարգ կրթության ոլորտ*

2013-2014 ուսումնական պարեշրջանի մեկնարկին Մայր Աթոռ Սուրբ

Էջմիածնում նշվել է Կրթության մշակների օրհնության օրը, որի շրջանակներում կրթական գերատեսչության, վերջինիս ենթակա կառույցների, մարզային, քաղաքային կրթական կառույցների, ինչպես նաև հանրապետության բարձրագույն, միջնակարգ և հանրակրթական հաստատությունների ղեկավար մարմինները և մանկավարժները մասնակցել են Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ անցկացվող օրհնության արարողությանը, ապա՝ տոնական հյուրասիրությանը:

Գիտելիքի օրվա՝ սեպտեմբերի 1-ի առիթով ՔԴԿ աշխատակիցների կողմից շատ դպրոցներում ընթերցվել է Նորին Սրբության շնորհավորական ուղերձը, իսկ մնացյալ բոլոր դպրոցներին տրամադրվել է ուղերձի էլեկտրոնային տարբերակը՝ տեղերում ընթերցելու նպատակով:

Նոյեմբերի 26-ին Կրթության և գիտության նախարարության հետ համատեղ կազմակերպվել է «Լավագույն ուսուցիչ» ամենամյա մրցույթի պարգևաբաշխությունը:

2012թ. անցկացված հայ գրատպության 500-ամյակին նվիրված «Գրերի գյուտից մինչև գրատպություն» հանրապետական մրցույթի շրջանակներում 2013թ. հունվար-մարտ ամիսներին մարզային այցելությունների և մրցույթին մասնակից դպրոցների տնօրենների հետ հանդիպումների ընթացքում գնահատանքի գրեր են շնորհվել բոլոր մասնակից դպրոցներին և «Մեսրոպական»-ի թերթիկներ՝ միջոցառումներում ներգրավված բոլոր աշակերտներին:

ԵՀԽ Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի հետ 2013թ. ևս շարունակվել է իրականացվել «Հոգևոր աջակցություն ընտանիքներին» ծրագիրը:

Օգոստոսի 9-15-ին Ծաղկաձորում ՀՀ ԿԳՆ և ՔԴԿ համագործակցությամբ կայացել է համահայկական հայագիտական 6-րդ օլիմպիադան, որին մասնակցել են ընդհանուր առմամբ 150 աշակերտ՝ ՀՀ-ից, ԼՂՀ-ից և Սփյուռքի հայկական կրթօջախներից:

Առաջին անգամ օլիմպիադայի շրջանակներում ՔԴԿ նախաձեռնությամբ կազմակերպվել է նաև «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի մրցույթ, որին մասնակցել են 54 աշակերտ:

ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի աջակցությամբ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության հետ դեկտեմբերի 23-24-ը իրականացվել է սիրիահայ ընտանիքների դպրոցահասակ երեխաներին, որպես օգնություն, գրենական պիտույքների տրամադրման ծրագիրը, որի շրջանակներում բաշխվել է 645 օրինակ՝ 78 դպրոցի աշակերտների թվով:

### *1գ. Կիրակնօրյա կրթության ոլորտ*

«Վորլդ Վիժն» բարեգործական կազմակերպության աջակցությամբ 2013թ.

հունիսի 23-29-ը կազմակերպվել է կիրակնօրյա կրթօջախների ուսուցիչների վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել է շուրջ 150 ուսուցիչ:

Դեկտեմբերի 2-3-ը ՔԴԿ և «Վորլդ Վիժն» միջազգային բարեգործական կազմակերպության համագործակցությամբ կայացել է թեմական ներկայացուցչական համաժողով՝ հայորդիների հոգևոր աճին և զարգացմանը նպաստող ծրագրի արդյունքները վերլուծելու նպատակով, ձևավորվել է խնդիրների բազա՝ որպես հիմք հետագա ծրագրերի մշակման համար: Նշյալ կազմակերպության հետ կազմվում է առաջիկա երկու տարվա համագործակցության պլան-ծրագիր:

### *1դ. Էօրնեկեան հանրակրթական դպրոց*

Դպրոցի նախորդ տարվա գործունեությունը կազմակերպվել է հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված աշխատանքային պլանի համաձայն՝ հիմնականում ուշադրություն դարձնելով ուսուցման որակի, վարչական և կազմակերպչական աշխատանքների արդյունավետության ապահովման և դպրոցի ներքին կարգապահության հարցերին:

Տարեսկզբին դպրոցում ձևավորվել է 17 դասարան՝ 254 աշակերտով, իսկ նոր ուսումնական տարվա սկզբին ձևավորվել է 18 դասարան՝ 282 աշակերտով: Տարվա ընթացքում դպրոցում աշխատել են 41 մանկավարժ և 18 ուսումնաօժանդակ աշխատող: Դպրոցում կրթական գործընթացը կազմակերպվել է մեկ հերթով:

Ուսումնական տարվա ընթացքում գործել է հինգ առարկայական մասնախումբ՝ լեզվագիտական, բնագիտամաթեմատիկական, պատմաաշխարհագրական, տարրական կրթության, ֆիզիկական և հոգևոր զարգացման: Վերջիններիս աշխատանքները կազմակերպվել են հաստատված աշխատանքային պլանով:

### 2. Հրատարակչական ոլորտ

Մայր Աթոռի հրատարակչական բաժնի տնօրենն է Հոգշ. Տ. Շահե վարդապետ Անանյանը:

***2ա.*** Անցյալ տարի բաժնի կողմից իրականացվել են օտար լեզուներից և գրաբարից թարգմանությունների, եկեղեցագիտական, հայագիտական, մեկնողական գրականության, ինչպես նաև քրիստոնեական բարոյագիտական, ուսուցողական գրքույկների հրատարակություններ: Հրատարակվել են «Ներածություն հայրախոսական աստվածաբանության» (Իոհան ավագերեց Մեյենդորֆ) գիրքը՝ թարգմանությամբ Թ. Խաչատրյանի և Ք. Քյուրքչյանի, «Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը» գիրքը՝ աշխատասիրությամբ Կարեն Մաթևոսյանի, «Հոգևոր զրույցներ» (Հակոբ պատրիարք Նալյան ) գիրքը՝ թարգմանությամբ ԳՀԾ-ի սաների և այլն: Ընդհանուր առմամբ անցյալ տարվա ընթացքում Հրատարակչական բաժինը տպագրել է 26 անուն գիրք:

### *2բ. «Էջմիածին» ամսագիր*

«Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիրն է տիար Արշակ Մադոյանը: 2013 թվականին ամսագիրը պատշաճ կերպով անդրադարձել է եկեղեցական բոլոր տոներին եւ արարողություններին, հովվապետական այցելություններին, հոբելյաններին: Ամսագրում տպագրվել են կրոնագիտական, պատմաբանասիրական, հայագիտական տասնյակ արժեքավոր հոդվածներ:

Պարբերաբար տպագրվում են Հայրապետական կոնդակներն ու օրհնության գրերը, պաշտոնական հաղորդագրությունները, հոգեւորականների քարոզները, գրախոսություններն ու հաղորդումները: Ամսագիրն անդրադառնում է նաեւ թեմերի հոգեւոր մշակութային կյանքին, ներկայացնում դրանց գործունեությունը:

Հաշվետու տարում ամսագիրը տպագրել է մի շարք միջնադարյան արժեքավոր անտիպ բնագրեր, մեկնություններ, մատենագիտական նյութեր, ինչպես նաեւ հնագիտական պեղումների, եկեղեցական վիմագրության, որմնանկարչության մասին արվեստագիտական հոդվածներ:

Ավանդական դարձած բաժիններին ավելացել են «Ճեմարանականներ» եւ «Հոգեւոր ընթերցումներ» բաժինները: «Հոգեւոր ընթերցումներ» բաժնում հանրամատչելի շարադրանքով ներկայացվել են մեր օրերի մարտահրավերները, պատասխան է տրվել հավատացյալներին հուզող շատ հարցերի:

2013 թվականին լրացել է ամսագրի 70-ամյակը, լույս է տեսել դեկտեմբերյան (840-րդ) համարը:

### *2գ. «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ*

«Քրիստոնյան Հայաստան» թերթի խմբագիրն է տիկին Աստղիկ Ստամբոլցյանը: Թերթի խմբագրությունը, ըստ սահմանված ժամանակահատվածի եւ պարբերականության, 2013 թվականին եւս լույս է ընծայել 24 համար:

Թերթի համարներում մշտապես տպագրվել են Ամենայն Հայոց Հայրապետի՝ տարբեր առիթներով խոսված բոլոր ուղերձներն ու պատգամները, Տեղեկատվական համակարգի տրամադրած, ինչպես նաեւ թեմերից առաքված լրատվական նյութերը, անդրադարձ է կատարվել նաեւ Մայր Աթոռի հրատարակչական բաժնի լույս ընծայած գրքերին՝ հաճախ դրանցից հատվածներ տպագրելով:

Պարբերաբար տպագրվել են կրոնական, պատմական, գրականագիտական, արվեստաբանական նյութեր: Շարունակվել են «Հայոց Կաթողիկոսներ» շարքը, «Կից սենյակում» եւ «Հովիվն ու նրա հոտը» հարցազրուցային շարքերը:

Հայոց Մեծ եղեռնի 100-ամյակին ընդառաջ տպագրվել են խմբագրության կողմից պատվիրված հոդվածներ, որոնք մասնավորապես ներկայացրել են օտարազգի եւ օտարագիր հայ գրողների ստեղծագործություններում առկա Հայոց ցեղասպանության անդրադարձները, երբեմն էլ դրանցից թարգմանաբար տեղադրվել հատվածներ:

**3. Երիտասարդության շրջան**

Հայ Եկեղեցու երիտասարդաց միավորման գրասենյակի տնօրենն է փիար Գևորգ Մկրտչյանը:

Անցյալ տարի Հայ Եկեղեցու երիտասարդաց միավորումը (ՀԵԵՄ), որը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բոլոր թեմական երիտասարդական խորհուրդների և թեմերում գործող բոլոր եկեղեցասեր երիտասարդական կառույցների համախմբողն է, նպաստել է թեմերում երիտասարդաց միավորումների ստեղծմանը, ապահովել է այդ միավորումների միջև համագործակցությունը, սատարել երիտասարդ հայ քրիստոնյաներին՝ մասնակցություն բերելու եկեղեցական կյանքին, կազմակերպել հոգևոր, մշակութային, կրթական, Սփյուռքի թեմերում՝ հայապահպանության և այլ ծրագրեր:

**4. ՀՀ զինված ուժեր**

ՀՀ ԶՈւ հոգևոր առաջնորդն է Գերշ. Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը: ՀՀ զինված ուժերում իրենց ծառայությունն են բերել թվով 47 հոգևոր սպասավոր՝ 2 աբեղա, 10 քահանա և 34 սարկավագ, որոնցից մշտական ծառայության մեջ են՝ 1 աբեղա, 3 քահանա և 2 սարկավագ:

2013 թ. ՀՀ զինված ուժերում եկեղեցական տոների առիթով կազմակերպվել են մի շարք միջոցառումներ: Հունվարի 28-ի՝ Հայոց բանակի կազմավորման օրվա կապակցությամբ բոլոր զորամասերում կատարվել են տոնական միջոցառումներ, որին հավուր պատշաճի իրենց մասնակցությունն են բերել տվյալ զորամասերի հոգևորականները, իսկ Բանակի բարձրագույն սպայական կազմը, ընկալյալ ավանդույթի համաձայն, մասնակցել է Մայր Աթոռում մատուցվող Ս. Պատարագին: Հայոց բանակի կազմավորման տոնի կապակցությամբ Վեհափառ Հայրապետի հայրապետական սրբատառ կոնդակով «Ս. Ներսես Շնորհալի» հայրապետական շքանշանով են պարգևատրվել բարձրաստիճան սպաներ:

ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդության խնդրանքին ընդառաջ՝ Հայաստանի աստվածաշնչային ընկերությունը շարունակեց հրատարակել և տրամադրել «Աստվածաշնչի պատգամը. Աստվածաշնչային ընթերցումներ զինվորի համար» (Ս. Էջմիածին, 2012թ.) գիրքը, որը բաշխվել է զորամասերին:

ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ պատրաստվել է աղանդավորության, ինչպես նաև ենթամշակույթների ազդեցության տակ գտնվող զինծառայողների հայտնաբերման և նրանց հետ տարվող համալիր աշխատանքների ծրագիր՝ համագործակցելով պետական և հասարակական տարբեր կառույցների հետ:

Հուլիսի 26-28-ը Ծաղկաձորում, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան Կլոր սեղան գրասենյակի աջակցությամբ, կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ ՀՀ զինված ուժերի հոգևորականների,

ԱՀՏԱ գծով սպաների եւ սպա-հոգեբանների համար՝ զինված ուժերում բռնաբարքների, ինքնախեղման, ինքնասպանության եւ այլ արտառոց դեպքերի նվազեցման նպատակով:

Եռամսյակը մեկ հրավիրվել են բանակում ծառայող հոգեւոր սպասավորների հավաքներ: ՀՀ եւ ԼՂՀ զորամասերում տարվա ընթացքում կատարվել են եկեղեցիների հիմնարկեք, խաչքարերի բացում եւ օրհնություն:

Տարեվերջը ՀՀ զինված ուժերի ծառայության մեջ նշանավորվել է Վեհափառ Հայրապետի եւ ՀՀ Նախագահի՝ սահմանային զորամաս այցելությամբ:

## 5. Քրեակատարողական հիմնարկներ

Քրեակատարողական հիմնարկների հոգեւոր պատասխանատուն է Հոգշ. Տ. Ռուբեն աբեղա Զարգարյանը: ՀՀ արդարադատության նախարարության համակարգում գործում են 12 քրեակատարողական հիմնարկներ՝ «Արթիկ», «Կոշ», «Վանաձոր», «Սեւան», «Հրազդան», «Աբովյան»(կանանց եւ անչափահասների), «Գորիս», «Նուբարաշեն» (ներառյալ ցմահ բանտարկյալները), «Էրեբունի», «Վարդաշեն» (սպաների եւ օտարերկրացիների), «Դատապարտյալների հիվանդանոց», «Երեւանի կենտրոն» (Ազգային անվտանգություն): Ժամանակացույցի համաձայն՝ յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկ կատարվել է շաբաթվա կտրվածքով առնվազն մեկ, առավելագույնը՝ երեք այցելություն: Բանտային կառույցներում հոգեւոր առաքելությունն իրականացվել է ՔԿՀ հոգեւոր սպասավորություն՝ 2 հոգեւորականով եւ թեմական 4 քահանայով: Քրեակատարողական հիմնարկների մեկուսարաններին, գրադարաններին եւ վարչական որոշ բաժինների տրամադրվել է ՀՀ աստվածաշնչային ընկերության կողմից պատրաստված «Նոր կտակարան եւ Սաղմոսներ» հրատարակությունը: Բոլոր հիմնարկները պարբերաբար ստացել են «Քրիստոնյա Հայաստան», «Շողակն» եւ այլ թերթեր: Քրեակատարողական հիմնարկներում ստեղծվել են նաեւ ձայնադարաններ, որոնք պարբերաբար համալրվել են «Շողակաթ» հեռուստաընկերության պատրաստած հոգեւոր հաղորդումներով եւ հոգեւոր ֆիլմերով:

## 6. Զանգվածային լրատվական միջոցների ոլորտ

### *եւ «Շողակաթ» հեռուստաընկերություն*

«Շողակաթ» ՀԸ տնօրենն է Տիկին Մանյա Ղազարյանը: Անցյալ տարի «Շողակաթ» հեռուստաընկերությունը շարունակել է եթեր հեռարձակվել Հոգեւոր-մշակութային հեռուստաընկերություն ՓԲԸ հեռուստաալիքով, որը եթերի ընդգրկման ծավալով երկրորդն է հանրապետությունում: «Շողակաթ» ՀԸ հաղորդումները եթեր են հեռարձակվել օրական 18 ժամ: Արտադրված սեփական հաղորդումների ծավալը կազմել է 235.5 ժամ՝ որոնցից.

1. հոգեւոր-եկեղեցական թեմաներով՝ 35%,
2. մշակութային՝ 65 %:

«Շողակաթ» ՀԸ հեռարձակել է 40 անուն հիմնական հաղորդաշար: Հոգևոր հաղորդումների հիմնական մաս են կազմել եկեղեցական կյանքի լրատվությունը, եկեղեցական կառույցների գործունեության ներկայացումը, հոգևոր քարոզչությունը, ծեսերը մեկնող և եկեղեցու պատմությունը ներկայացնող ճանաչողական ծրագրերը, քարոզխոսությունը, հավատացյալների վկայությունները: Շարունակվել են պատրաստվել նաև պետականաշինության գործում, երկրի մշակութային և կրթական կյանքում, հասարակական կյանքի փարբեր ոլորտներում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու և հոգևոր դասի մասնակցությունը լուսաբանող վավերագրական փեսաֆիլմեր: Պետպատվերով պատրաստվել և հեռարձակվել են «Մշակութային ազդագիր», «Ձայնագիր» ամենշաբաթյա լրատվական ծրագրերը և «Թ-եմա» ամենշաբաթյա մշակութային հաղորդումը:

Ամեն օր եթեր են հեռարձակվել աղոթքներ, սաղմոսներ, Հայրապետական պատգամներ, «Խոսք մեծաց» (մշակույթի և պատմության երևելիները հավատի, քրիստոնեության մասին) և քարոզչական այլ հոլովակներ:

Եկեղեցական բոլոր տոներին օրական 10-15 անգամ եթեր են հեռարձակվել տոնին վերաբերող տեսահոլովակներ:

Պատրաստվել է 21 տեսահոլովակ՝ Խրիմյան Հայրիկ, Վազգեն Ա. , Գարեգին Ա. , Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսների քարոզներից մեջբերումներով, տաղավար տոների թեմաներով:

***6բ «Լույս» հեռուստաընկերություն***

«Լույս» հեռուստաընկերության տնօրենն է տիար Ոսկան Մամիկոնյանը: «Նոր դար, նոր հազարամյակ» ՍՊԸ արտոնագրով գործող հեռուստաընկերությունը աշխատել է շուրջօրյա ռեժիմով և նկարահանել սեփական արտադրության մի շարք հաղորդաշարեր:

Հաշվետու ժամանակահատվածում հեռուստաընկերությունը հեռարձակել է նաև ամենօրյա «Բանբեր» լրատվական ծրագիրը և մամուլի ամենօրյա տեսությունը: Ըստ այդմ՝ տարվա կտրվածքով սեփական արտադրության հաղորդումների ծավալը կազմել է 145 ժամ: Մնացյալ եթերաժամը լրացվել է «Շողակաթ» հեռուստաընկերության սեփական արտադրանքով և տրամադրած ֆիլմերով, հաղորդաշարերով, համերգային և այլ ծրագրերով:

**7. Տեղեկատվական համակարգ**

Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրենն է Արժանապատիվ Տ. Վահրամ քահանա Մելիքյանը: 2013 թ. ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի պաշտոնեության կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

ա. Պատրաստվել է 221 հաղորդագրություն և 238 մամուլի տեսություն,

բ. Հայաստանի հանրային ռադիոյով հեռարձակվել է 47 ռադիոհաղորդում,

գ. Կազմակերպվել են բազմաբնույթ տեսանյութերի նկարահանումներ,

դ. «Հայելի ակումբ»-ում կազմակերպվել են մամուլի ասուլիսներ Եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի ստեղծման (Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյան) եւ Մեծ պահքի մասին (Տ. Առողիկ քահանա Կարապետյան), «Տեսակետ» մամուլի ակումբում՝ «Դիակիզում» թեմայի շուրջ (Տ. Զաքարիա վարդապետ Բաղումյան), ինչպես նաեւ «Միրո, հավատքի եւ հավատարմության» ուխտերթի լուսաբանումը զանգվածային լրատվամիջոցներով,

ե. Տեղեկատվական համակարգը Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի հետ «Երկխոսության սրահ» ծրագրի շրջանակներում կազմակերպել է քննարկումներ հետեւյալ թեմաներով.

- «Փոխնակ մայրը եւ եկեղեցին»,
- «Հղիության արհեստական ընդհատում»,
- «Դիակիզում»,
- «Էֆթանազիա. բարոյագիտական եւ աստվածաբանական մոտեցումներ»,
- «Եկեղեցին եւ զանգվածային լրատվության միջոցները»,
- «Ինքնասպանություն»,
- «Հայոց Եկեղեցին եւ հայրենի օրենսդրական դաշտը»,
- «Եկեղեցին եւ ընտանեկան արժեքները»,
- «Եկեղեցին եւ համաշխարհայնացումը»:

Նկատի ունենալով սոցիալական ցանցերում ժողովրդի, հատկապես երիտասարդության մեծ ներգրավվածությունը՝ Տեղեկատվական համակարգի անունով բացվել է առանձին ֆեյսբուքյան էջ, որն ունի արդեն 2050 հետեւորդ: Ամեն օր թարմացվող էջում տեղ են գտնում բոլոր պաշտոնական հաղորդագրությունները, «Շողակաթ» հ/ը հոգեւոր հաղորդումները, այլ կայքերում հրապարակված շահեկան հոդվածներն ու հարցազրույցները, ինչպես նաեւ Հայ Եկեղեցու վերաբերյալ ճանաչողական նյութեր: Էջում կան նաեւ մշտական շարքեր՝ «Հայ Եկեղեցու օրացույց», «Շարական», «Օրվա լուսանկարը», «Ճանաչի՛ր Ս. Էջմիածինը», «Գանձեր Ս. Էջմիածնի», «Սրբություններ Ս. Էջմիածնի», «Ամենայն Հայոց Կաթողիկոսներ»: ՀԲԸՄ Հայկական վիրտուալ քոլեջի խնդրանքով Ռուսովի հայ համայնքի համար կազմակերպվել է առցանց դասախոսություն «Հայ եկեղեցական ճարտարապետությունը» թեմայով:

**8. Համացանց**

Համացանցային ծառայությունների գրասենյակի տնօրենն է տիկին Փոլա Մարի Տեր-Մաթոյանը: Համացանցում կառավարվող փիրույթներն են Հայոց Եկեղեցու պաշտոնական կայքը եւ Ս. Էջմիածնի սոցիալական էջերը Facebook-ում, YouTube- ում եւ Twitter-ում:

Կայքը շարունակաբար վերանայվում եւ թարմացվում է, բաժինները եւ

ծրագրերը պարբերաբար ենթարկվում են որոշակի փոփոխությունների: Եպիսկոպոսների կենսագրությունները ծրագրվել է վերանայել եւ թարմացնել 2014-ին:

Գիտաշխատողի շնորհիվ կայքում բացվել է նոր «Թեմատիկ հոդվածներ» բաժինը: Facebook- սոցցանցում հետեւորդների թիվը աճել է՝ մեկ տարվա ընթացքում հասնելով 6577-ի:

Twitter- սոցցանցում հետեւորդների թիվը հասել է 1025-ի:

YouTube-կայք էջում արխիվացվել են վերջին երեք տարվա բոլոր կարճ տեսանյութերը, որոնք համապատասխան նկարագրություններով տեղադրվել են նաեւ պաշտոնական կայքում:

## ՎԱՆՔԵՐ

Մայր Աթոռի Վանորեից տեսուչն է Գերշ. Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանը:

Անցյալ տարի եւս վանական առօրյայով ապրել եւ իրենց հոգեւոր գործունեությունն են իրականացրել Ս. Խոր վիրապի, Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի, Ս. Շողակաթի, Ս. Գեղարդավանքի եւ Ս. Սեւանավանքի վանական համալիրները: Վանքերում կանոնավորապես կատարվել են ծիսապաշտամունքային արարողություններ: Անցյալ տարի վանքերում բազմամարդ ուխտագնացություններով եւ մասունքի դուրս բերումով մատուցվել է Սուրբ Պատարագ եւ մեծ շուքով նշվել տվյալ սրբերի հիշատակության օրերը:

Հիշյալ վանքերում անցյալ տարվա ընթացքում արձանագրվել են 4618 մկրտություն եւ 2116 պսակադրություն.

Ս. Խոր վիրապ- մկրտվել են 1501 հոգի, կատարվել է 502 պսակադրություն:

Ս. Հռիփսիմե- մկրտվել են 536 հոգի, կատարվել է 472 պսակադրություն:

Ս. Գայանե- մկրտվել են 903 հոգի, կատարվել է 866 պսակադրություն:

Ս. Շողակաթ- մկրտվել են 241 հոգի, կատարվել է 75 պսակադրություն:

Ս. Գեղարդավանք- մկրտվել են 1110 հոգի, կատարվել է 101 պսակադրություն:

Ս. Սեւանավանք- մկրտվել են 327 հոգի, կատարվել է 100 պսակադրություն:

Ս. Գայանե վանքում այսօր ապրում են եւ իրենց օգտակար ծառայությունն են բերում երեք միանձնուհի:

## ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԱՏՈՒՌ-ՄԿՐՏԱՐԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ս. Վարդան եւ Ս. Հովհաննես Մկրտիչ մատուռ-մկրտարանի պատասխանատուն է Արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Քեսաբլյանը: Անցյալ տարի մատուռ-մկրտարանում մկրտվել է 3354 մարդ:

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգեւոր պետուչն է Գերշ. Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը:

Հոգեւոր պետուչի պնօրինությամբ եւ հոգեւոր սպասավորների նախաձեռնությամբ Մայր եկեղեցում ամեն երկուշաբթի, երեքշաբթի եւ չորեքշաբթի օրերին՝ Երեկոյան ժամերգությունից հետո, պեղի են ունեցել Աստվածաշնչի սերտողություններ եւ քարոզխոսություն հավատացյալների հետ: Համայնքի համար կազմակերպվել են ուխտագնացություններ դեպի Արցախ, Վրաստան եւ Հայաստանի տարբեր սրբավայրեր: Եկեղեցու երիտասարդաց միության կողմից կատարվել են այցելություններ ծերանոցներ, մանկատներ, հանրակրթական եւ հատուկ դպրոցներ, ինչպես նաեւ ԲՈՒՀ-եր: Մայր եկեղեցուն կից գործում են նաեւ մանրանկարչության եւ ասեղնագործության խմբակներ, մանուկների համար նախատեսված հոգեւոր դասընթացներ: Անցյալ տարվա ընթացքում եկեղեցում մկրտվել են 1047 հայորդի եւ կատարվել է 350 զույգի պսակադրություն:

## ԵԿԵՂԵՑԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Անցյալ տարի արդյունավոր են եղել նաեւ Մայր Աթոռի շինարարական աշխատանքները, որոնք համակարգվել են ճարտարապետաշինարարական բաժնի կողմից: Բաժնի տնօրենն է պիար Արա Վարդանյանը: ՃՇ կողմից նախագծվել, ընթացքի մեջ են եւ ավարտին են հասցվել մի շարք աշխատանքներ: Ստորեւ ներկայացված են կարեւորները.

*Ավարտված նախագծային աշխատանքներ.*

1. Տպարանի շենքի օդափոխության նախագիծ
2. Էօրնեկեան վարժարանի կառուցման նախագիծ
3. Հառիճավանքի թոնրատան, միաբանական կացարանի նախագիծ:

*Ընթացքում գտնվող նախագծային աշխատանքներ.*

1. Գորգերի թանգարանի կազմակերպման նախագիծ
2. Ուսանողական հանրակացարանի վերակառուցման նախագիծ
3. Ուսանողական հանրակացարանին կից այգու բարեկարգման նախագիծ
4. Բաց խորանի հարթակի բարեկարգում եւ խորանի նկուղի մասնակի նորոգում ու ջրամեկուսացում
5. Խոր վիրապ վանքի Սուրբ Աստվածածին եկեղեցու եւ զանգակատան վերականգնման նախագիծ
6. Գեղարդավանքում թանգարանի կազմակերպման նախագիծ

7. Տրդատակամարի վերակառուցման նախագիծ
8. Սեւանավանքի եւ Վազգենյան դպրանոցի համալիր շինարարական ծրագրի մշակում:

*2013թ.-ին ավարտված շինարարական աշխատանքներ.*

1. «Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոն (II փուլ)
2. «Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի ասֆալտապատում եւ նշագծում
3. Հաղարծնի վանքային համալիրի վերականգնում եւ վերակառուցում (առաջին փուլ)
4. Մկրտարանին կից մեկ հարկանի շինություններ
5. Սինոդի շենքին եւ գեղարվեստի դպրոցին կից ավտոկայանատեղի
6. Հայոց բանակի հուշարձանի ե/բ հիմքերի կառուցում
7. Մայրավանքում «Ռուբեն Սեւակ» թանգարան եւ սարկավագաց ննջարանների լոգարաններ եւ սանհանգույցներ
8. Հին վեհարան
9. Վարչական շենքի կցակառույց
10. «Վաչե եւ Թամար Մանուկյաններ» մատենադարանի արտաքին բարեկարգում
11. «Վաչե եւ Թամար Մանուկյաններ» մատենադարանի պարիսպների կառուցում
12. Երեմյան խցեր
13. Վեհարանի հարավային մուտքի կազմակերպում:

*Շինարարության ընթացքում գտնվող աշխատանքներ.*

1. Եկեղեցի Երեւանի Էրեբունի թաղամասում
2. Եկեղեցի Երեւանի Արաբկիր թաղամասում
3. Եկեղեցի Բերդ քաղաքում
4. Եկեղեցի Սեւան քաղաքում
5. Սեւանի թերակղզու վանական համալիրի բարեկարգում
6. Գյումրու Հայորդյաց տուն
7. Մայր Աթոռի ներտարածքային էլ. մատակարարում
8. Վեհարանի նորոգում
9. Վեհարանին կից հանդիսությունների դահլիճ
10. Դիվանատան տարածքի բարեկարգում
11. Գանձատան նորոգում (II փուլ)
12. Գարեգին Ա. կրթական կենտրոն
13. Երեւանի Սուրբ Կաթողիկե եկեղեցու տարածքում Սուրբ Աննա եկեղեցու եւ Հայրապետական նստավայրի կառուցում

14. Բյուրականի «Հայկաշեն» կաթողիկոսական նստավայրի նորոգում
15. Նորատուսի Սուրբ Աստվածածին եկեղեցու վերականգնում
16. Հառիճավանքի վեհարանի եւ վեհարանի դահլիճի նորոգում
17. Հաղարծին վանքային համալիրի վերականգնում (II փուլ) եւ վանատան կառուցում
18. Էօրնեկեան դպրոց:

## ԿԱԴՐԵՐԻ ԲԱԺԻՆ

Կադրերի բաժնի տնօրենն է Հոգշ. Տ. Կյուրեղ աբեղա Դավթյանը:

Առ 2014 թ. հունվարի 1-ը Մայր Աթոռի կառույցներում գրանցված հաստիքների ընդհանուր թիվը կազմել է 1266, որից Մայր Աթոռում գրանցված հաստիքները՝ 960, Հայորդյաց տներ՝ 306:

## «ՎԱՉԷ ԵՎ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Մատենադարանի տնօրենն է Արժանապատիվ Տ. Արարատ քահանա Պողոսյանը: Անցյալ տարվա հոկտեմբերի 28-ին Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ ստեղծվել է հանձնախումբ նոր գրքերի գնմամբ զբաղվելու համար: Մատենադարանն ունի աշխատանքի երկու ուղղություն՝ գրադարանի համալրում ու ֆոնդերի դասակարգում եւ մատենադարանի գիտական գործունեություն.

*ա) Մատենադարանի գրադարանի համալրում եւ դասակարգում.*

Կենտրոնն այսօր ունի շուրջ 64 703 միավոր գիրք, շուրջ 412 միավոր՝ հնատիպ, 22 500 միավոր՝ հայալեզու, 31 000 միավոր՝ օտարալեզու, 8 000 միավոր՝ մամուլ, եւ հունահայոց համայնքի անդամ տիար Ջավեն Գրիգորյանից նվեր ստացված գրքերը՝ 2791 միավոր: Անցյալ տարի գրադարանի աշխատանքները հիմնականում ուղղվել են գրադարանի գրքերի քարտագրմանն ու հաշվառմանը, համակարգված եւ հեղինակային քարտարանների ստեղծմանը: Գիտական կենտրոնի գրադարանը աշխատանքների կատարման ընթացքում համագործակցել է Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Ազգային գրադարանի, Ազգային արխիվի, ԵՊՀ-ի, Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի արխիվային բաժնի եւ այլ գրադարանների հետ: Մատենադարանի գրադարանն ունեցել է շուրջ 300 ընթերցող:

*բ) Գիտական գործունեություն.*

Անցյալ տարի մատենադարանն իր առջեւ խնդիր է դրել ուսումնասիրել եկեղեցական մատենագրության, եկեղեցական իրավունքի, Եկեղեցու պատմության, եկեղեցական արվեստի, Եկեղեցու պատմական աշխարհագրության,

ծիսագիտության, ասվածաբանության բնագավառներին առնչվող հիմնախնդիրները: Մատենադարանի տնօրեն Արժանապատիվ Տ. Արարատ քահանա Պողոսյանը, համագործակցելով Հանրագիտարանների խմբագրության հետ, հոդվածներ է գրել Ս. Էջմիածնի տպարանի և «Էջմիածին» ամսագրի մասին, որոնք պետք է հրապարակվեն Հայ գրատպության 500-ամյակի առիթով լույս ընծայվող հանրագիտարանում:

## ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների տնօրենն է Արժանապատիվ Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը: Անցյալ տարի Մայր Աթոռի թանգարանային համակարգը բնականոն կերպով ծավալել է իր մշակութային և հոգևորքարոզչական գործունեությունը: Շարունակվել են թանգարանային հավաքածուի համալրման աշխատանքները: Գնվել են 1 հատ ձեռագիր Ավետարան (ԺԶ. դար), 3 հատ հայկական ձեռագործ գորգ (Մեղրի -Գողթան, 1898 թ., Դիզակ -Զանգեզուր, ԺԹ. դարի վերջ, Փոքր Հայք, ԺԹ. դարի վերջ), 1 հատ ձեռաց խաչ (1893 թ.), 1 հատ սկիհ՝ մաղզմայով (ԺԹ. դար), ինչպես նաև եղել են նվիրատվություններ՝ 1 սրբապատկեր Ռումինիայի Հայոց թեմից (Երուսաղեմ, 1815 թ.), 1 հատ ձեռաց խաչ (1831 թ.), ճաճանչախաչ (1804 թ.), մասունքարան Կենաց Փայտի մասունքով (1855 թ.), 1 հատ բյուզանդական մետաղադրամ: Շարունակվել են Մայր Աթոռի թանգարանային արժեքների նոր գիտական քարտերի և ֆոնդացուցակների ստեղծման աշխատանքները՝ մասնակցությամբ հրավիրյալ մասնագետների: Ինչպես նշվեց, «Հոգևոր-մշակութային ձեռնարկումներ» վերնագրի տակ անցյալ տարի սեպտեմբեր 10-ին Սուրբ Էջմիածնի թանգարանային համակարգում բացվել է նոր ՝ Ռուբեն Սևակի թանգարանը, իսկ հոկտեմբեր 30-ին Ալեք և Մարի Գանձապանը բացվել է «Կառլ և Էմմա Սողոյաններ» ձեռագրասրահը:

## ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Վարչատնտեսական բաժնի տնօրենն է Գերշ. Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը:

Բաժնի գործունեությունը նպատակ ունի ապահովելու Մայր Աթոռի կառույցների, բաժինների և օղակների համար տնտեսական բազմաբնույթ ծառայությունների իրականացումը: Վարչատնտեսական բաժնի ենթակայության ներքո գտնվում են փաստաթղթաշրջանառության, ճարտարապետաշինարարական, նախահաշվային, մատակարարման բաժինները, ինժեներատեխնիկական սպասարկման ենթաբաժինը, սեղանատները, կոմունալ սպասարկման ենթաբաժինը, բակային տնտեսությունը, պահակային ծառայությունը, «Նազգաշյան մանուկ-

ների տուն» երեխաների աջակցության կենտրոնը, գրատների ցանցը, պահեստները, մոմաձուլարանը, ավտոտնտեսությունը: Անցյալ տարի վարչատնտեսական բաժինը համակարգված աշխատանքներ է իրականացրել՝ ապահովելով Մայր Աթոռի գործունեությունը:

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Եկեղեցական հայեցակարգային գրասենյակի տնօրենն է Գերշ. Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը: Գրասենյակը Վեհափառ Հայրապետի կողմից հաստատվել է անցյալ տարվա հունիսի 10-ին:

Գրասենյակի կողմից հրապարակվել են մի շարք հոդվածներ՝ «Գենդերային հավասարություն», «Հայ եկեղեցու մարտահրավերներ», «Հայաստանի չծնվող մայրեր», «Եկեղեցին ոչ թե դեմ է գործելու, այլ հանուն մեր ինքնության» եւ այլ արդիական խնդիրների վերաբերյալ:

«Հանրային» եւ «Վեմ» ռադիոներով խոսել են «Երիտասարդությունն այսօր», «Քրիստոնեական կրթության դաստիարակությունն այսօր», «Հայ եկեղեցին այսօր» եւ այլ թեմաների վերաբերյալ: Գրասենյակի ջանքերով հեռուստատեսությամբ ցուցադրվել են հաղորդումներ:

Կազմակերպվել են տարաբնույթ թեմաների վերաբերյալ դասախոսություններ, ինչպես նաեւ ծրագրային բանախոսություններ Երեւան եւ Էջմիածին քաղաքներում գործող «Մանանա» երիտասարդական քրիստոնեական ծրագրի երիտասարդների համար:

## ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես նախորդ տարի, 2013 թ. նույնպես շարունակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելությունը սոցիալական աջակցության ոլորտում: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը շարունակել է համագործակցությունը հասարակական եւ մշակութային կազմակերպությունների, բարեգործական հիմնադրամների հետ: Համագործակցության արդյունքում կազմակերպությունների կողմից հատկացված հումանիտար օգնության շնորհիվ սոցիալական բարեգործական ծրագրեր են իրականացվել Հայ Եկեղեցու հայաստանյան թեմերի քաղաքներում եւ գյուղերում: Նյութական օգնությունից զատ հոգեւոր աջակցություն է ցուցաբերվել նաեւ զանազան տեղական հասարակական կազմակերպություններին եւ միություններին:

Մայր Աթոռի կողմից իրականացվող սոցիալական ծրագրերի մեջ են մտնում «Իզմիրլյան» բժշկական կենտրոնը, Մալաթիայի, Արաբկիրի, Նորքի եւ Էջմիածնի բարեգործական ճաշարանները, «Նազգաշյան մանուկների տուն» երեխաների աջակցության կենտրոնը:

2013 թ. «Իզմիրլյան» բժշկական կենտրոնը շարունակել է ծավալել իր գոր-

ծունությունը՝ անհրաժեշտ բժշկական օգնություն ցուցաբերելով այցելուներին: Բժշկական կենտրոնի վերաբացումից հետո ամեն շաբաթ կազմակերպվել է բաց դռների օր, որի արդյունքում խորհրդատվության եւ հետազոտության համար դիմել է 180 քաղաքացի: Բաց դռների օրեր են կազմակերպվել ՀՀ մարզերում, արտաբյուջետային աջակցությամբ եւ հովանավորությամբ կատարվել է 658 քաղաքացու անվճար խորհրդատվություն: Բուժհաստատությունում ստացիոնար բուժում են ստացել նաեւ արտերկրների քաղաքացիներ: 2013 թ. ձեռք են բերվել նորագույն բժշկական սարքավորումներ եւ գործիքներ՝ փոխառությամբ եւ նվիրատվությամբ:

2013 թ. ընթացքում ճաշարաններում սնվողների միջին թիվը կազմել է 200 մարդ, միայն Վանաձորի բարեգործական ճաշարանում սնվում է 100 մարդ: Անցնյալ տարի կատարվել են ճաշարանների աշխատակիցների բուժզննում: Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոներին շահառուներին է մատուցվել տոնական ճաշ եւ բաժանվել են նվերներ:

«Նազզաշյան մանուկների տուն» երեխաների աջակցության կենտրոնն անցյալ տարի ունեցել է 15 սան: Կենտրոնը ձեռք է բերել կլոր կնիք, բացել է դրամային հաշվեհամար, Էջմիածնի տարածքային հարկային բաժնում գրանցվել է որպես շահառու: Մեծ աշխատանք է տարվել կենտրոնի սաների դաստիարակության եւ կրթության համար (աղջիկները մասնակցում են խմբակային եւ անհատական պարապմունքների՝ տարբեր առարկաներից): Կազմակերպվել են տարբեր միջոցառումներ, սաները մասնակցել են տարաբնույթ համերգների, միջոցառումների, հանդիպումներ են կազմակերպվել տարբեր երգիչների եւ դերասանների հետ:

Սոցիալական ծրագրերն առավել համակարգելու նպատակով Մայր Աթոռում նախորդ տարի դրվել են Սոցիալական ծառայության գրասենյակի հիմքերը:

2013 թ. ապրիլ ամսին Արմավիրի թեմի համայնքները զգալի վնաս էին կրել աղետաբեր կարկուտից: Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ անմիջապես ստեղծվել է հանձնախումբ, որը զբաղվել է կարկտահարությունից տուժած ընտանիքների արձանագրմամբ եւ վնասի դիմաց աջակցության տրամադրմամբ: Տուժած ընտանիքներին Մայր Աթոռի կողմից որպես օգնություն տրամադրվել է 300 պարկ ալյուր, որը բաժանվել է 7 համայնքի 282 ընտանիքի:

Ամանորի եւ Ս. Ծննդյան տոներին ընդառաջ Ս. Էջմիածնի եւ սփյուռքահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոնի համագործակցության արդյունքում 100.000-ական դրամ է փոխանցվել սիրիահայ առավել կարիքավոր մոտ 50 ընտանիքի: Դրամական օգնություններ են տրվել կարիքավոր ուսանողների, բազմանդամ կարիքավոր ու ազատամարտիկների ընտանիքների:

## ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

### *ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ*

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդն է Գերշ. Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը: Հաշվետու ժամանակաշրջանում թեմի գործունեության կարևորագույն և հիմնական նպատակն է եղել եկեղեցական համայնքների հոգևոր կյանքի կազմակերպումն ու ամրապնդումը, քրիստոնեական դաստիրակությունը, քարոզչությունն ու բարեգործությունը, հովվական ու կրոնադաստիարակչական աշխատանքների առավել աշխուժացումն ու ծավալումը:

Արարատյան Հայրապետական թեմն ընդգրկում է Երևան քաղաքը և Արարատի մարզը: Թեմն ունի 98 համայնք, որոնցից 5-ը քաղաքային՝ շուրջ 1.500.000 միլիոն բնակչությամբ: Թեմի տարածքում գործում են 28 եկեղեցի և 8 մատուռ: Թեմի եկեղեցիներում հոգևոր ծառայություն են մատուցում 45 քահանա և 9 սարկավագ, հոգևոր և աշխարհիկ ծառայողների ընդհանուր թիվը կազմում է 506 հոգի: Թեմի համայնքների հոգևոր կյանքն աշխուժացնելու համար ուշադրություն է դարձվում գործող եկեղեցիների Ծխական խորհուրդների գործունեությանը: Թեմում գործում են մամլո դիվանը, «Ցերեկային կենտրոնը», «Ծնողազուրկ երեխաների օգնության գրասենյակը»: Թեմի և միջազգային հասարակական կազմակերպությունների համագործակցության արդյունքում 2013 թ. իրականացվել են բազմաթիվ բարեգործական ծրագրեր: Թեմի երիտասարդական միությունն իրականացնում է սոցիալական ծրագրեր, բազմաթիվ միջոցառումներ բուհերի, երիտասարդական կազմակերպությունների հետ:

Կրթադաստիարակչական առաքելություն են իրականացնում թեմի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը, ՀԵԵՄ-ի կրթադաստիարակչական կենտրոնը:

Անցյալ տարի թեմում կատարվել է 11.375 մկրտություն և 3.463 պսակադրություն:

### *ՇԻՐԱԿԻ ԹԵՄ*

Թեմում գործում է 22 եկեղեցի և աղոթատուն: Թեմում ծառայում են 16 քահանա և 4 սարկավագ:

Շարունակվել են Գյումրիի Ս. Ամենափրկիչ եկեղեցու վերակառուցման աշխատանքները, նախադրյալներ են ստեղծվել Գյումրիի Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերակառուցման համար, կառուցվել է Ս. Մինաս մատուռը՝ անշուք սրբապատկերի փոխարեն: Վերանորոգվել է Հոգեվանքի խորանը, տեղադրվել՝ նոր Ս. Սեղան:

Ախուրյանի շրջանում շարունակվել են Հովիտ գյուղի եկեղեցու ամբողջական, ինչպես նաև Բասեն գյուղի եկեղեցու վերակառուցման աշխատանքները:

Գետք գյուղում ձեռք է բերվել հողապարածք՝ եկեղեցու կառուցման նպատակով: Ամասիայի շրջանի Բյուրակն գյուղում շարունակվել է նորակառույց եկեղեցու շինարարությունը:

Սոցիալ-կրթական կենտրոնը իր գործունեությունը իրականացնում է չորս ուղղություններով՝ մշակութային, կրթական, սոցիալական եւ երիտասարդական:

Թեմում գործունեություն են ծավալել մանկական խմբակները, երիտասարդաց միությունները, ուսանողական միությունը, շարունակվել են «Ս. Յոթվերք» ամսաթերթի տպագրությունն ու հեռուստատեսային հաղորդումների հեռարձակումը:

Անցյալ տարի թեմում կատարվել է 1700 մկրտություն եւ 950 պսակադրություն:

## ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄ

Թեմում գործում է 36 եկեղեցի: Թեմի եկեղեցիներում պաշտոնավարում են 1 վարդապետ, 2 աբեղա եւ 10 քահանա:

2013 թվականին վերականգնվել է Տաշիրի տարածաշրջանի Մեծավան համայնքի Ս. Գեւորգ եկեղեցին (ուշ միջնադար), որի համար կառուցվել է նաեւ նոր զանգակատուն:

Թումանյանի տարածաշրջանի Մարց գյուղում կառուցվել եւ օծվել է Ս. Խաչ մատուռը: Սանահինի վանական համալիրում իրականացվել են տանիքի նոր ծածկասալերի տեղադրման աշխատանքներ:

2013թ. ողջ ընթացքում շարունակվել են Շահումյան գյուղի եկեղեցու կառուցման աշխատանքները. այժմ ընթացքի մեջ են ներքին հարդարման աշխատանքները:

2013 թ. ավարտվին են մոտեցել Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցում ներքին հարդարման, որմնանկարների ձեւավորման, գմբեթի, վեղարի թիթեղապատման աշխատանքները:

Օձունի Ս. Աստվածածին եկեղեցում (Զ. դ.) ողջ տարվա ընթացքում կատարվել են վերանորոգման աշխատանքներ, որոնք վերահսկվել են «Հովհան Օձնեցի» հիմնադրամի, ՀՀ մշակույթի նախարարության եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից:

Քոբայրի վանական համալիրում(ԺԲ.-ԺԳ. դդ.) եւս շարունակվել են վերականգնման եւ կառուցման աշխատանքները:

2013 թվականին թեմապատկան «Ծիծեռնակ» ճամբարում հանգստացել են անապահով եւ կարոտյալ ընտանիքների 1570 երեխա, որոնցից 100 սիրիահայ երեխա՝ մեկենասությամբ ՀՀ սփյուռքի նախարարության եւ Լոռու մարզպետարանի, 1000 երեխա՝ աջակցությամբ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի, 165 երեխա՝

«Մանես» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ (Ալավերդի՝ 140 եւ Թեղուտ՝ 25):

Անցյալ տարի թեմում կատարվել է 1470 մկրտություն եւ 771 պսակադրություն:

### ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄ

Թեմում գործում է 23 եկեղեցի: Թեմի եկեղեցիներում պաշտոնավարում են 1 աբեղա,17 քահանա, 5 այցելու հոգեւորական, 3 սարկավագ եւ 3 ուրարակիր:

Անցյալ տարի թեմում շարունակվել են Արմավիր քաղաքի մատուռի վերանորոգչական աշխատանքները: Շարունակվել են Ջանֆիդա համայնքի Ս. Կարապետ եկեղեցու, Բաղրամյանի տարածաշրջանի Դալարիկ համայնքի եկեղեցու, ինչպես նաեւ Էջմիածնի տարածաշրջանի Առատաշեն գյուղի եկեղեցու շինարարությունը: Վերջինիս ավարտը նախատեսված է 2014 թ.: Թեմի քահանաները ելույթ են ունեցել Արմավիր քաղաքի ԱԼՏ հեռուստաընկերությամբ եթեր հեռարձակվող «Եկեղեցական ժամ» հաղորդման շրջանակներում:

Թեմի հովանու ներքո գործում են մանուկների եւ պատանիների կրթադաստիարակչական խմբակներ, բարեգործական առաքելության իրականացմամբ թեմը համագործակցում է գործընկեր հաստատությունների, բարերարների հետ՝ աջակցություն ցույց տալով կարիքավորներին եւ աղքատ ընտանիքներին:

Անցյալ տարի թեմում կատարվել է 1768 մկրտություն եւ 456 պսակադրություն:

### ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄ

Անցյալ տարի մեկնարկել է Արծվանիկ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու եւ նույն գյուղի գերեզմանատանը գտնվող նույնանուն եկեղեցու վերակառուցումը:

Մեկնարկել են Սեւաքարի Ս. Հռիփսիմե փլուզված եկեղեցու վերականգնման աշխատանքները:

Թեմում կազմակերպվել են միջոցառումներ եկեղեցական տոների առիթներով, շարունակվել է թեմի կողմից իրականացվող բարեսիրական գործունեությունը, որով աջակցություն է ցույց տրվել թեմի կարիքավորներին եւ ծնողազուրկ երեխաներին:

Շարունակել է գործել Գորիսի Երիտասարդաց միությունը՝ քարոզչություն իրականացնելով երիտասարդության շրջանում, ինչպես նաեւ կազմակերպվել այցելություններ ծերանոց :

Շարունակվել է «Խուստուփ» հեռուստաալիքով հեռարձակվող «Կանթեղ» հոգեւոր հաղորդաշարը:

Անցյալ տարի թեմում կատարվել է 896 մկրտություն եւ 207 պսակադրություն:

## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄ

Թեմում գործում են 24 եկեղեցի: Թեմի եկեղեցիներում պաշտոնավարում են 1 վարդապետ,12 քահանա, 2 սարկավագ:

Թեմը կրթադաստիարակչական աշխատանքներ է իրականացրել Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի միջոցով՝ կազմակերպելով կիրակնօրյա դասընթացներ Օշականում եւ Կարբիում, ինչպես նաեւ թեմի հոգեւոր հովիվները մասնակցել են ՔԴԿ-ի կողմից կազմակերպված «Աջակցություն ընտանիքներին» ծրագրին եւ դասընթացներ իրականացրել համայնքների դպրոցներում:

Թեմի հովանու ներքո գտնվող եկեղեցիներում, վանքերում եւ հոգեւոր համայնքներում առկա կառույցներում ( դպրոց, մանկապարտեզ, նախակրթարան եւ այլն) եկեղեցական եւ պետական տոների առիթներով մշտապես կազմակերպվել են տարատեսակ միջոցառումներ:

Որոշ հոգեւոր հովիվների կողմից տպագրվել են հոգեւոր թեմաներով տարատեսակ թերթոններ եւ բաժանվել թեմի հավատացյալ հայորդիներին:

Թեմի գրեթե բոլոր համայնքներում երեցկանանց միջոցով գործում է «Լույս մանկանց» ծրագիրը:

Անցյալ տարի թեմում կատարվել են եկեղեցիների որոշակի վերանորգման, տարածքների բարեկարգման, ասֆալտապատման եւ այլ աշխատանքներ: Մի շարք հողատարածքներ են ձեռք բերվել եւ գրանցվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անունով:

Թեմը ձեռք է բերել նաեւ երեք բնակարան:

Անցյալ տարի թեմում կատարվել է 956 մկրտություն եւ 603 պսակադրություն:

## ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄ

Թեմում գործում են 25 եկեղեցի, հոգեւոր ծառայություն են իրականացնում 15 քահանա, 13 սարկավագ եւ 17 դպիր:

Թեմում վերակառուցման ընթացքի մեջ են Նոր Գյուղի Ս. Աստվածածին, Եղվարդի Ս. Սարգիս եկեղեցիները եւ Նոր Հաճնի Ս. Աղոթատեղին:

Անցյալ տարի թեմում ակտիվ կերպով իրենց կրթադաստիարակչական գործունեությունն են ծավալել կիրակնօրյա դպրոցները: Հոգեւոր-քարոզչական նպատակներով տեղական հեռուստաընկերությունների եթերներում իրականացվել են հոգեւոր հաղորդումների ցուցադրումներ:

Թեմը մշտապես սերտ համագործակցության մեջ է եղել երեխաների աջակցության հիմնադրամի հետ եւ հաճախակի կազմակերպվել են համատեղ միջոցառումներ, ուխտագնացություններ: Թեմը հոգեւոր քարոզչական գործունեություն է ծավալել նաեւ հեռուստատեսությամբ՝ հոգեւոր բնույթի հաղորդումների ցուցադրում կազմակերպելով ինչպես «Շողակաթ» հեռուստատեսությամբ, այն-

պես էլ Հրազդան, Չարենցավան եւ Աբովյան քաղաքների տեղական հեռուստաալիքներով:

Սոցիալական ոլորտում թեմն իրականացրել է նաեւ 15-20 դպրոցական խիստ կարիքավոր աշակերտների գրենական պիտույքների տրամադրում, մի քանի ուսանողների վարձավճարի հովանավորում՝ անհատ անձանց կողմից, եւ այլ նյութական օգնություն կարիքավոր ընտանիքներին:

Անցյալ տարի թեմում կատարվել է 2334 մկրտություն եւ 528 պսակադրություն:

## *ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄ*

Թեմում անցյալ տարի ավարտվել է Վաղաշեն համայնքի Ս. Գրիգոր Նարեկացի նորակառույց եկեղեցու շինարարությունը:

Ընթացքի մեջ են Լճաշեն, Թթուջուր համայնքների եկեղեցիների կառուցման աշխատանքները:

Ավարտին են մոտեցել Լիճք համայնքում կառուցվող եկեղեցու աշխատանքները:

Տարբեր միջազգային կազմակերպությունների եւ անհատների միջոցներով մի շարք համայնքներում իրականացվել են սոցիալական, նյութական, բնապահպանական եւ առողջապահական աջակցության ծրագրեր:

Թեմում գործում է 3 կիրակնօրյա դպրոց: Թեմն իրականացնում է հոգեւոր քարոզչական գործունեություն նաեւ հեռուստահաղորդումներով՝ օգտագործելով «Գեղամա» հեռուստաընկերության եթերաժամերը:

Անցյալ տարի թեմում կատարվել է 944 մկրտություն եւ 308 պսակադրություն:

## *ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԹԵՄ*

Թեմում գործում է 12 եկեղեցի եւ 2 մատուռ: Թեմում իրենց ծառայությունն են մատուցում 8 հոգեւորական:

Թեմի հոգեւորականաց դասն ակտիվորեն մասնակցել է մարզային, քաղաքային, գյուղական իշխանությունների համագործակցությամբ տեղի ունեցող պետական, հոգեւոր, կրթական, մշակութային միջոցառումներին՝ որոշ միջոցառումներ նախաձեռնելով անձամբ: Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը եկեղեցական կարեւորագույն տոներին նախաձեռնել է հոգեւոր-մշակութային միջոցառումներ: Թեմի երիտասարդաց միությունները նույնպես կազմակերպել են բազմապիսի միջոցառումներ՝ համագործակցելով ՀԵԸՄ-ի եւ այլ երիտասարդական կազմակերպությունների հետ:

Անցյալ տարի թեմում կատարվել են եկեղեցիների որոշակի վերանորգման,

տարածքների բարեկարգման աշխատանքներ: Գնդեվազ գյուղում կառուցվել և օծվել է Ս. Եղիշե մատուռը:

Անցյալ տարի թեմում կատարվել է 188 մկրտություն և 90 պսակադրություն:

## ՏԱՎՈՒՇԻ ԹԵՄ

Թեմում սպասավորում են 1 վարդապետ, 1 աբեղա, 6 քահանա :

Անցյալ տարի բացվել են Խաշթառակում Ս. Դավիթ (մայիսի 9-ին), Այգեպարի (հոկտեմբեր 22-ին), Վ. Կարմիրաղբյուրում ՝ Ս. Հովհաննես( նոյեմբերի 16-ին), Ենոքավանում՝ Ս. Եվգինե (նոյեմբերի 20-ին) մատուռները:

2013 թ. հոկտեմբերի 17-ին օծվել է Բերքաբերի Ս. Գևորգ եկեղեցին: Առանձնակի մեծ շուքով է նշվել Վարագա Ս. Խաչի տոնը, որի ժամանակ Մայր Աթոռից Նոր Վարագավանք է տարվել Քրիստոսի Խաչափայտի մասունքը:

Թեմի եկեղեցիներում, վանքերում և հոգևոր հովվություններում, դպրոցներում, մանկապարտեզներում, ինչպես նաև այլ հաստատություններում եկեղեցական տոների առիթներով մշտապես կազմակերպվել են բազմաբնույթ միջոցառումներ, աշխատանքներ են տարվել մատաղ սերնդի հոգևոր դաստիարակության համար: Թեմում գործող կիրակնօրյա դպրոցներում անխափան կերպով իրականացվել են դասընթացներ հոգևոր հովիվների կողմից: Ստեղծվել է սրբանկարչության արվեստանոց, որտեղ աշխատում են 5 սրբանկարիչ: Բացվել է նաև երկու հուշանվերների խանութ :

Անցյալ տարի թեմում կատարվել է 971 մկրտություն և 151 պսակադրություն:

## ԱՐԹԻԿԻ ԹԵՄ

Թեմում գործում է 15 եկեղեցի, կա նաև 5 հովվություն: Անցյալ տարի Արթիկի շրջանում սեփականաշնորհման գործընթացի մեջ են եղել Լեռնակերտ, Սպանդարյան, Գեղանիստ, Անուշավան գյուղերի եկեղեցիները:

Վերանորոգվել են Մեծ Մանթաշի Ս. Աստվածածին, Արևաշատի՝ Ս. Աստվածածին, Սպանդարյանի՝ Ս. Ամենափրկիչ, Պեմզաշենի եռախորան, Լեռնակերտի՝ Ս. Հովհաննես, Գեղանիստի՝ Ս. Աստվածածին եկեղեցիները: Վերակառուցման ընթացքի մեջ են մի շարք եկեղեցիներ:

Թեմի սոցիալական բաժինը տարվա ընթացքում տարբեր կազմակերպությունների հետ համատեղ զանազան կարճաժամկետ ծրագրեր է իրականացրել՝ հումանիտար օգնության բաշխում անապահով ընտանիքներին, ծնողազուրկ երեխաներին, ամառային հանգստի կազմակերպում Ծաղկաձորի ճամբարում և այլն:

Անցյալ տարի թեմում կատարվել է 390 մկրտություն և 170 պսակադրություն:

***ԱՐՑԱԽԻ ԹԵՄ***

Անցյալ տարի Արցախի թեմում կառուցվել եւ օծվել են Հադրութի Քարագլուխ գյուղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին եւ Աղդամի զինվորական մատուռը: Շարունակվել է Ստեփանակերտի Մայր Տաճարի կառուցումը եւ հասցվել 2-րդ հարկին:

Վերանորոգվել է Մարտունու շրջանի Նոր Շենի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին: Ամբողջովին վերակառուցվել է ԼՂՀ ՊԲ Ստեփանակերտի շտաբի մատուռը: Ընթացքի մեջ են Հադրութի շրջանի Կարմրակուճ գյուղի Ս. Աստվածածին, Մարտունու շրջանի Գիշի գյուղի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիների վերանորոգչական աշխատանքները:

2013 թ. օծվել են Ջաբրաիլի զնդի զինվորական մատուռի հիմքերը, եւ սկսվել են կառուցման աշխատանքները:

Թեմը հոգեւոր քարոզչական գործունեություն է իրականացնում նաեւ տարբեր հաղորդումների հեռարձակմամբ:

Անցյալ տարի թեմում կատարվել է 1023 մկրտություն եւ 76 պսակադրություն:

Ի խորոց սրտի աղոթում ենք, որ Տերը պահի, պահպանի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, նրա Գահակալին, եկեղեցական եւ աշխարհական դասերին՝ Հայ Եկեղեցու հավատավոր զավակներիս՝ շարունակելու մեր ծառայությունները, եւ նոր հաջողություններ պարգեւի մեր ջանքերին, մեր ծրագրերին եւ բոլոր գործերին՝ ի նպաստ մեր Սուրբ Եկեղեցու պայծառության եւ ի վայելումն հավատավոր մեր զավակաց. ամեն: